


ՀՀ ՏԱՎՈՒՅԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՁ ԼՃԻ ՓՈՂՈՑ 26
ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԲԱԶՄԱՖՈՒԿՑԻՈՆԱԼ ԲԱՆԿԵԼԻ
ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(ԼՐԱՍՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ)



Նախաձեռնող՝
Երևան Գրիգորյան
ՇՄԱԳ հաշվետվության մշակող՝
«Էկոնոմ Էկո ՍՊԸ»

Խնդիր	Ա Արժուածական	Խ
Համապատասխան պատճեն	Ա Արժուածական	
Տեղական պատճեն	Ա Արժուածական	ՀԱՅԱՍՏԱՆ

Երևան, 2025

2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՍԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	4
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ	8
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	9
4. 1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	9
4. 2 Սեյսմիկա և երկրաբանություն	10
4. 3 Կլիման և օդային ավազան	11
4. 4 Հողային ռեսուրսներ	16
4. 5 Ջրային ռեսուրսներ	17
4. 6 Կենսաբազմազություն	20
4. 7 Պատմության և մշակութային հուշարձաններ	21
4. 8 Բնության հուշարձաններ	28
4. 9 Հատուկ պահպանվող տարածքներ	29
4. 10 Նախատեսվող գործունեության իրականացման մարզի և համայնքի սոցիալ-տնտեսական ամփոփ նկարագիր	30
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԺՈՒՄՆԵՐ)	31
5. 1 Գործունեության ընդհանուր նկարագիր և տեխնիկատնտեսական ցուցանիշներ	31
6. ԿՈՄՈՒՆԱԼ ԿԵՆՑԱՐԱՅԻՆ/ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	34
7. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ	39
7. 1 Շինարարարության ժամանակացույց	39
7. 3 Ինժեներա-տեխնիկական և բանվորական անձնակազմ	39
7. 4 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի պաշտպանություն	40
7. 5 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	41
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀԱՐԱՎՈՐ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱՉԵՑՄԱՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	42
8. 1 Ազդեցությունների ընդհանուր նկարագիր	43
8. 2 Արտանետումների աղբյուրները	43
8. 3 Մթնոլորտային օդ	43
8. 4 Ջրային ռեսուրսներ	43
8. 5 Հողային ռեսուրսներ	44
8. 6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	45
8. 7 Հակարդեհային միջոցառումներ	46
8. 8 Աղմուկ և թրթոռում	46
8. 9 Թափոնների կառավարում	49

9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	50
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)	52
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	63
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐՈՒԹՅՈՒՆ	68
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	73
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼԵՎՈՒԹՅՈՒՆ/ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՄԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	75
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ, ՀԱՏՎԱԾ ԿԱԴԱՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ ԵՎ ՆԱԽԱԳԻԾԻ ԿՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ՝ WGS (ARMREF-02) ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՂԵԶԻԿԱԿԱՆ ԿՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ Մ1:500	78
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ԿԱԴԱՏԱՐՅԻՆ ՔԱՐՏԵԶ	82
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԴԻԼԻԶԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ	83
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	94
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԱՐՏԱՔԻՆ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ և ԿՈՅՑՈՒՂԻ	82

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաձեռնող	Երևան Գրիգորյան
Նախաձեռնողի հասցեն՝	Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 20/34: E-mail. economecoeia@gmail.com
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ք. Դիլիջան, Պարզ լճի փողոց 26
Հեռախոս՝	093 40 18 40
Հողամասի ընդհանուր մակերեսը	0.7901 հա

2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՍԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-211,

27. 11. 2006 թ.) -կարգավիրում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները։ Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները։ Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուատավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները։

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.): Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը։ Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնի և ցենոֆոնի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը։

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.): Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության,

պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օրեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրը» (2001թ.): Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքների և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին»

ՀՀ օրենք (2008թ.): Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

Զրային օրենսգիրը (2002թ.): Զրային օրենսգրքի խնդիրներն են ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման մեխանիզմների ստեղծումը, ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցումը, ջրերի ստանդարտների ու ազգային ջրային պաշարի մակարդակի պահպանումը և վերահսկողության իրականացումը, ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը, ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը՝ օգտագործելով արդի նորագույն տեխնոլոգիաներ, մասնավորապես տվյալների առցանց փոխանցմամբ հոսքաչափական սարքավորումներ, բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը, ջրամատակարարման և ջրահեռացման

համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց օգտագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը, հիդրոտեխնիկական կառույցների անվտանգ և անխափան օգտագործման ու պահպանման պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը, ջրային համակարգերի կառավարման կազմակերպումը, պահպանումը և զարգացումը, ստորերկրյա ջրային մարմինների համար լավ կարգավիճակի, մակերևութային ջրային մարմինների համար առնվազն լավ կարգավիճակի, իսկ խիստ փոփոխված ջրային մարմինների համար՝ պոտենցիալ լավ կամ միջակ կարգավիճակի ապահովումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998): Կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության բնագավառում իրավախախումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.): Սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական իհմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ-376-Ն՝ 2002թ. հունիսի 12): Կարգավորում է սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 19994թ. և լրամշակված 2022թ.)- Կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական իհմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ

մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.): Ներառում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«Աղքահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)-կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղքահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղքահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղքահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղքահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանարապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 -Ն որոշում:

ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 781-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանման ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-

Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08. 09. 2011թ. N1396-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի ո 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի ո 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄԱՎՈՐՈՒՄԸ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել Դիլիջանի գեղատեսիլ վայրերից մեկում, Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական վարժարանի հարակից տարածքում, Ե. Գրիգորյանին համասեփականատիրության իրավունքով պատկանող ք. Դիլիջան, Պարզ լճի փողոց,թ. 26 հասցեով հողամասի (վկայական՝ N26062023-11-0027, կադաստրային ծածկագիր՝ 11-003-0674-0061) սահմաններում:

Հողամասը հարակից է դեպի Պարզ լիճ տանող ճանապարհին: Տեղանքի լանդշաֆտը ռելիեֆային է, ինչը թելադրում է, որ համալիրը կիրականացվի երեք տարբեր հարթությունների վրա,որոնք իրարից և հարակից տարածքից կսահմանափակվեն Ե/թ հենապատերով, իսկ ճանապարհի հարակից սահմանում կհամապատասխանեն գոյություն ունեցող ճանապարհի նիշերին, դեպի տարածք մուտքերը առավելագույնս հարմարավետ դարձնելու համար:

Համալիրը բաղկացած է երկու բազմաֆունկցիոնալ բնակելի մասնաշենքերից, որոնցից յուրաքանչյուրը ունի չորս վերգետնյա և մասնակի մասնարդարացին հարկեր: Բացի բնակելի մասնաշենքերից՝ հողի երեք նիշերից կենտրոնականի վրա կազմակերպված է հասարակական

նշանակության ժամանցի գոտի, փակ լողավազան, սրճարան, բիլիարդ:

Ներկայումս տարածքում առկա են սոճիներ, այլ ծառատեսակներ ու թփեր: Հաշվի առնելով ծառերի տեղակայումը հնարավորինս փորձել ենք պահպանել դրանք, իսկ հեռացումից չխուսափած ծառերի փոխարեն կտնկվեն նորերը: Ըստ նախնական ուսումնասիրության ենթակա է հատման 42 ծառ և թուփ, որոնք կփոխարինվեն ավելի քան 100 նոր ծառերով և 100-ից ավել թփերով:

Մասնաշենքերում նախատեսված չեն նկուղային հարկեր, սակայն հողային աշխատանքներից հետո վերջնականապես հնարավոր կլինի համոզվել դրանց անհրաժեշտ չլինելու մեջ:

Շենքերի առաջին հարկերում նախատեսված են հասարակական նշանակության տարածքներ, խանութներ, խաղասենյակներ և սպասարկման համար նախատեսված այլ տարածքներ: Երկրորդ հարկերը նախատեսված է օգտագործել որպես սեզոնային հյուրատներ

(ապարտամենտներ), իսկ երրորդ և վերին հարկերը կծառայեն որպես բնակարաններ:

Այսպիսով Ա և Բ մասնաշենքերի առաջին և երկրորդ հարկերը համարվում են հասարակական տարածքներ, իսկ երրորդ և դրանից վերև հարկերը՝ բնակելի:

Համալիրը արտաքին սահմաններով նախատեսված է պարսպապատել և ցանկապատել:

Տարածքում նախատեսված է կոյուղաջրերի մաքրման կայան: Զրահեռացումը կազմակերպված է:

Կառուցումից հետո համալիրը կդառնա ապրելու և հանգստի համար գրավիչ վայր, սպասարկման համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներով:

Բացի ջրի ռեզերվուարներից, հարևանությամբ գտնվում է մեկ կառուց, որը հանդիսանում է անցակետ դեպի Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան և ամենամոտ կառուցից գտնվում է նվազագույնը 45մ հեռավորության վրա:

Դեպի աստիճանավանդակ տանող դռները հակարդեհային են և ինքնափակվող: Վերելակների հորաններում և աստիճանավանդակներում նախատեսված է օդի դիմիար՝ ՕԴ-1 համակարգով:

Համաձայն ՀՀԸ 40-01.01-2014 առյուսակ 1-ի 4-րդ կետի՝ լողավազանի մասնաշենքում հրշեց ծորակներ չեն նախատեսվում, քանի որ կառուցի ծավալը չի գերազանցում 5000 խ.մ-ը:

Տարածքում նախատեսված է հրշեց հիդրանտ:

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝ ներկայացված նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ, որոնք կմեղմեն, նվազագույնի կհասցնեն կամ կբացառեն հնարավոր բացասական ազդեցությունները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4. 1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները



Նախատեսվող գործունեությունը կազմակերպվելու է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի վարչական տարածքում: Դիլիջան, նախկինում անվանվել է

նաև Դելիջան, հանգստավայրային և առողջարանային բնակավայր (քաղաքային համայնք) Հայաստանի Տավուշի մարզում, մարզկենտրոն Իջևանից 36 կմ հարավ-արևմուտք: Գտնվում է Աղստև գետի ափին՝ ծովի մակերևույթից 1100-1510 մետր բարձրության վրա: Բնակավայրը շրջապատված է Փոքր Կովկասի լեռնազանգվածներով, որի արդյունքում էլ տեղացիների կողմից հաճախ անվանվում է «Հայկական Շվեյցարիա» կամ «Փոքր Շվեյցարիա»: Հայաստանի նշանավոր հանգստավայրերից է: Քաղաքը անմիջականորեն հարում է «Դելիջան ազգային պարկ» բնության հատուկ պահպանվող տարածքին:

Դելիջանը գտնվում է Տավուշի մարզկենտրոն Իջևան քաղաքից 35-40 կմ, մայրաքաղաք Երևանից 96 կմ, Վանաձորից 38 կմ, իսկ Սևանա լճից՝ 33 կմ հեռավորության վրա: Դելիջանը քաղաքը հարակից Հաղարծին, Շեղուտ, Գոշ, Հովիտ, Աղավնավանք և Խաչարձան գյուղերի հետ միասին ընդգրկված է Դելիջան խոշորացված համայնքի կազմում:

Համայնքը իյուսիսից և արևելքից սահմանակից է Ծաղկավան համայնքին, արևելքից՝ Սևքար, Ենոքավան, Գետահովիտ, Գանձաքար, Իջաքար, Նավուր համայնքներին, հարավից Գեղարքունիքի մարզին, հարավ-արևմուտքից՝ Կոտայքի մարզին, արևմուտքից՝ Լոռու մարզին: Դելիջանը քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1100-1300 մետր բարձրության վրա՝ շրջապատված Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Հյուսիս-արևելքում հարում է Բազումի, արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից՝ Փամբակի, արևելքից՝ Միափորի և հարավ-արևելքից՝ Արեգունի անտառաշատ լեռներին: Կիրճի լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառային տարածություններով, որոնք վերջանալով լեռնային կատարներին, փոխարինվում են ալպյան մարգագետիններով: Քաղաքը անմիջապես փոխած է Աղստև գետի հովտում:

Դելիջանը նաև գրոսաշրջային կարևոր կենտրոն է: Համայնքի կենտրոնում գտնվող Շարամբեյան փողոցը, որը քաղաքի պատմական կենտրոնն է, այն հայտնի է ինքնատիպ ճարտարապետությամբ, արհեստանոցներով, պատկերաբաններով ու թանգարաններով: Քաղաքի շրջակայքում են գտնվում գրոսաշրջային նշանակություն ունեցող Պարզ լիճը, Զովստակ վանքը, Հաղարծինը, Գոշավանքը, Գոշի լիճը և այլն: Դելիջանը նաև որպես արշավների, լեռնային հեծանվասպորտի և առողջարանային հանգստի կենտրոն է:

4.2 Սեյսմիկա և երկրաբանություն

Համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտունուման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀԸՆ 20.04_ 2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն» Նախագծման նորմեր»-ի՝ մարզի ողջ տարածքը գտնվում է սեյսմիկ վտանգավորության գոտում (1-3-րդ գոտիականության): Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀԸՆ 20.04.2020թ.-ի, տեղագննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax=



0.4g արագացմամբ:

4. 3 Կլիման և օդային ավագան

Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ, չափավոր ցուրտ կլիմայով: Միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տևական ցուրտ ծմեռներով՝ կայուն ձնածածկությով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ:

Գործունեության տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 15-ի N 03-Ն հրամանով հաստատված ՀՀԸ 22-01-2024


«ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ

ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը, որոնցով հաստատված «Դիլիջան»

օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի արժեքները ներկայացված են ստորև աղյուսակներում.

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է տաք ամառը՝ հովիսի միջին ամսական ջերմաստիճանը $18,5^{\circ}\text{C}$, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 73% (Ժ.15-ին), և չափավոր ցուրտ անհողմային ծմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը $-1,4^{\circ}\text{C}$ է, հարաբերական խոնավությունը 65%



(Ժ.15-ին):

Այլուսակ 1. Օդի միջին ջերմաստիճանն

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Սիզին տարեկան՝ դրվագներում, °C	Բացառագույն՝ նվազագույն, °C	Բացառագույն՝ առավելագույն, °C
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Դիլիջան	-1.4	-0.7	2.5	7.8	12.1	15.5	18.5	18.3	14.4	9.4	4.4	0.4	8.4	-22.8	38.1

Այլուսակ 2. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	Ըստ ամիսների													Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Սիզին տարեկան՝ դրվագներում, %	Սիզին ամսական՝ ամսվա 15-ին ժամանակաշրջանում, %	Սիզին ամսական՝ ամսվա 15-ին ժամանակաշրջանում, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

Դիլիջան	65	65	69	72	78	78	76	76	79	78	73	67	73	65	51	76	61
---------	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

Այլուսակ 3. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի անվանումը	միջին ամսական օրական առավելագույն												Տեղումների քանակը	Տեղումների ապրիլ- մարտ ամիսներին, մմ			
	ըստ ամիսների																
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16		
Դիլիջան	23	30	48	68	107	104	70	52	46	51	36	21	656	158	498		
	35	33	42	42	58	74	45	47	40	45	44	33	74				

Այլուսակ 4. Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %							Ըստ ուղղությունների	%	Միջին ամսական առավելագույնը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիսի ամիսներին,	Միջին արագությունների ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղություն դեկտեմբերի - փետրվարի ամիսներին	Միջին առավելագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավ	Հյուսիսարևելյան									
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

Շիլջան	հունվար	3	19	2	3	4	32	15	4	28	2.1	ՀԱՅՈՒՆ	ՀԱՅՈՒՆ	ՀԱՅՈՒՆ	ՀԱՅՈՒՆ				
		1.6	1.7	1.8	2.4	2.2	2.5	2.0	1.5										
	ապրիլ	4	41	6	4	5	20	9	3	31	2.0								
		1.6	2.2	2.0	2.4	1.3	2.3	1.6	1.5										
	հուլիս	5	63	10	2	2	7	8	3	42	1.7								
		1.9	2.5	2.4	1.4	1.6	1.3	1.1	1.4										
	հոկտեմբեր	5	46	6	3	4	17	10	3	43	1.5								
		1.7	2.2	1.9	1.7	1.4	1.7	1.4	1.4										

Օդային ավազան. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գիսավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Հայաստանի հանրապետությունում օդային ավազանի դիտարկումներ են կատարվում շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Վերջինս մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացնում է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Շաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ: Ստորև ներկայացված է մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանցի քարտեզը:

<p>Շրջակա պետական համակարգի Դիլիջան մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում: Դիլիջան քաղաքի օդային ավազանների աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության</p>	<p>միջավայրի պետական մոնիթորինգի շրջանակներում քաղաքում գործում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում: Դիլիջան քաղաքի օդային ավազանների աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության</p>
---	---



Կողմից մշակվել է ուղեցոյց ձեռնարկ, որում ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից: Հիմք ընդունելով վերը նշված ձեռնարկը, 10.000 -50. 000 բնակչության թիվ ունեցող բնակավայրերի համար մթնոլորտային օդում ֆոնային կոնցենտրացիան կարելի է սահմանել որպես՝ փոշի՝ $0.095 \text{ մգ}/\text{m}^3$, ծծմբի երկօքսիդինը $0.006 \text{ մգ}/\text{m}^3$, ազոտի երկօքսիդինը՝ $0.033 \text{ մգ}/\text{m}^3$, ածխածնի օքսիդինը՝ $1.1 \text{ մգ}/\text{m}^3$: Սույն ցուցանիշները տարածվում են

Նախատեսվող գործունեության տարածքի վրա, հաշվի անոելով, որ այն գտնվում է Դիլիջան քաղաքում, որի բնակչությունը կազմում է 2024թ. տվյալներով 26 701 մարդ :

Ժամանակավոր առաջարկություններ «Լեռասակար եղութերի ֆոնային կոնցենտրացիաներ քնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Քնակավայրի բանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)		
	Փոշի	Ծծնի երկօրսիդ (SO ₂)	Ազոտի երկօրսիդ (NO ₂)
50 -100	0.098	0.007	0.034
10-50	0.095	0.006	0.033
<10	0.071	0.006	0.023

Նախատեսվող գործունեության արդյունքում՝ ԲԿԴ-ով սահմանված միջոցառումների պատշաճ իրականացմամբ, օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի կանխատեսվում:

4.4 Հողային ռեսուրսներ

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը իրենից ներկայացնում է թեք, մասամբ թույլ թեքությամբ մակերեսով ռելիեֆ: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1285,0-1300,0 մետրերի սահմաններում:

Հետազոտվող տարածքի կոսմոֆոտ



Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (աղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի

Մարզում են գտնվում «Դիլիջան» ազգային պարկը, շուրջ 33 765 հազար հա տարածքով, Ախնաբարդի կենու պուրակ, Արջատիլենու, Իջևանի, Զիկատարի և Գանձաքարի արգելավայրերը: Մարզի տարածքում գործում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝ Սևքարի, Իջևանի, Նոյեմբերյանի և Արծվաբերդի դուստր անտառտնտեսությունները», ինչպես նաև «Բերդի սորաններ» դենդրոպարկը:



և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015թ. հունիսի 16-ի«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություներ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Ֆիզիկաէրկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, քարաթափությունը, սողանքը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառուցիչ վրա՝ բացակայում են:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հրատման և արխիվային նյութերի տվյալների՝ (լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ Հողաբուսական շերտը, ավազակավը, կավը:

Տարածքում հրատված հրատանցքերի հիման վրա պարզ է դարձել երկրաբանալիթոլոգիական կտրվածքները: Տեղամասի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում են հետևյալ 3 շերտերը կամ ինժեներակրաբանական տարրերը՝ վերևսկց ներքք:

Շերտ 1 Հողաբուսական շերտ (տարբեր ծառերի արմատներ): Շերտի հրատված հզորությունը 1.4-2.4 մետր է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀԸ 32-01-2022-ի աղյուսակ 101-ի 50% 8. 1) I և 50% 8. 2) II կարգ է:

Շերտ 2 (el-dl Pg3) Ավազակավ՝ բաց շագանակագույն, պինդ թանձրության: Գրունտը թույլ խոնավ է: Շերտի առավելագույն հզորությունը, մինչև 12 մետր խորությամբ հրատված հրատանցքերի արդյունքում, 10 մետր է: Շերտը ունի լայն տարածում: Օլիգոցենի ժամանակաշրջանի առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀԸ 32-01-2022-ի աղյուսակ 101-ի 80% 33.


3) II և 20% 33. 4) III կարգ է:

Շերտ 3 (el-dl Pg3) Կավ՝ բաց շագանակագույն պինդ թանձրության: Գրունտը թույլ խոնավ է: Շերտի հրատված հզորությունը 0,9-1,0 մետր է: Շերտի տարածվածությունը սահմանափակ է: Օլիգոցենի ժամանակաշրջանի առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀԸ 32-01-2022-ի աղյուսակ 101-ի 7. 4) III կարգ է:

4.5 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում զրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածութան մոնիթորինգն իրականացվում է «Հիդրոօքերևութարանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151




դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սաղցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Զրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Տավուշի մարզն առանձնանում է ջրագրական խիտ ցանցով, որը պայմանավորված է տարածքի երկրաբանական և ջրաերկրաբանական կառուցվածքով, ունիելի առանձնահատկություններով, մթնոլորտային առատ տեղումներով: Տավուշի մարզով հոսում են 66 գետ և գետակ, իսկ մարզում կա 4 լիճ, որոնցից ամենահայտնիներն են Պարզ լիճը, Գոշ լիճը, Ակնա լիճը, որոնք օգտագործվում են էներգետիկ և ռողոման նպատակներով:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոյերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Զրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն՝ անհոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար:

Հյուսիսային ԶԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Որոշ օպերատիկ հիդրոլոգիական դիտակետերի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական



Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		Խոխեմքեր		Խոյեմքեր		Գեկսեմքեր				
Վաստացի	Խորմա	%	Վաստացի	Խորմա	%	Վաստացի	Խորմա	%		
Փամբակ	Թումանյան	4.30	6.75	64	4.57	6.94	66	4.01	5.61	72
Հերեց	Այրում	17.6	19.8	89	17.0	20.5	83	16.4	16.4	100
Չորագետ	Գարգառ	8.75	9.90	88	8.24	9.96	83	7.90	8.01	99
Աղստև	Իջևան	3.59	5.21	69	3.22	5.11	63	3.16	3.67	86
Գետիկ	Գոշ	0.83	1.83	45	0.85	1.73	49	0.92	1.18	78


փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Այլուսակ 1-ում:

Ինչպես երևում է այլուսակի տվյալներից բոլոր ամիսներին ջրի միջին ամսական ելքերը ցածր են եղել ամսական նորմաներից:

Մակերևութային ջրերի որակ Հյուսիսային ԶԿՏ-ում: Զրի որակի մոնիթորինգն

իրականացվում է 22 դիտակետում: Աղստև գետի ջրի որակը Դիլջան քաղաքից վերև, Դիլջան քաղաքից ներքև, Իջևան քաղաքից վերև և Իջևան քաղաքից ներքև հատվածներում նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գետիկ գետի ջրի որակը գետաբերանում նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Սպորտերկրյա քաղցրահամ ջրեր: Հյուսիսային ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է 2 բնադրյուրում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլջան համայնքի Հաղարձին գյուղում: N2059



0.22/վ: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է N2058 բնադրյուրում, որտեղ հանքայնացման, նիտրատ, սուլֆատ և քլորիդ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՄՁԿ-ները:

Դիլջան քաղաքի ջրային ռեսուրսների նկարագիրը : Դիլջանը, լինելով Հայաստանի ամենականաչ քաղաքներից մեկը, գտնվում է Տավուշի մարզի կենտրոնական հատվածում և առանձնանում է իր բացառիկ բնապահպանական պայմաններով ու ջրային հարստությամբ: Այս տարածաշրջանը գտնվում է լեռնային և անտառապատ գոտում, որտեղ ջրային ռեսուրսները ձևավորվում են ինչպես մթնոլորտային տեղումների, այնպես էլ բնական աղբյուրների, գետերի միջոցով:

❖ Գետային համակարգ

Տարածաշրջանի գլխավոր ջրային հոսքը **Աղստև գետն** է, որը Դիլջանի միջով հոսելով ձևավորում է շրջակա բնության գեղատեսիլ լանդշաֆտը: Աղստևն ունի մի քանի վտակներ՝ ինչպես **Բովուտ, Հախումյան, Գոշ**, որոնք սնուցվում են ձնհալքից, տեղումներից և անտառային աղբյուրներից: Այս գետային համակարգը ունի մեծ էկոլոգիական և տնտեսական նշանակություն՝ ապահովելով ինչպես խմելու, այնպես էլ ոռոգման ջրի մատակարարում:

❖ Աղբյուրներ և հանքային ջրեր


Դիլջանը հայտնի է իր **բազմաթիվ աղբյուրներով**, որոնք տարածված են թե՛ քաղաքում, թե՛ անտառային ու լեռնային միջավայրում: Աղբյուրներից մի քանիսը ունեն նաև բուժիչ հատկություններ, օրինակ՝ հանքային աղերով հարուստ ջրերը կիրառվում են որպես բնական բուժական ռեսուրս: Այս աղբյուրները օգտագործվում են նաև տեղաբնակների կողմից որպես խմելու ջրի առաջնային աղբյուր:

□ Լճեր և ջրային ավազաններ

Տարածքում է գտնվում հանրահայտ **Պարզ լիճը**, որը ոչ միայն էկոտուրիզմի կարևոր ուղղություն է, այլ նաև ջրային կենսաբազմազանության օջախ: Բացի Պարզ լճից, Դիլիջանի արգելոցի ներսում և սահմաններին կան մի քանի փոքր լճակներ ու ջրային ավազաններ, որոնք ծառայում են կենդանական աշխարհի պահպանման և էկոհամակարգի կայունացման նպատակներին:

Հիդրոերկրաբանական տեսակետից հետազննվող հարթակում փորված հորատանցքերում

ՀՀ Հյուսիսային օրավագանային կառավարման տարածքի
մակերեսութային օբյեկտ որպես



գրունտային ջրերի տեղամաս հայտնաբերվել է միայն Հա-2 հորատանցքում 4,0 մետր խորության հորիզոնում, որը կրում է տեխնածին բնույթ և կապված է անմիջապես հարևանությամբ անցնող ջրատար խողովակի, ըստ որում, վթարման հետևանքով առաջացած արտահոսքի հետ: Բնական գրունտային ջրերը տարածքում ըստ հորատված հորատանցքերի արդյունքում չեն նկատվել:

4.6 ԿԵՆՍԱԲՐԱՋՄԱԳՆԻԹԵՈՒՆ

Համաձայն Տավուշի մարզի 2017-2025թթ. ռազմավարական գարգացման ծրագրի՝ մարզում գերակշռում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները: Ըստ Ա. Լ. Թախտաջյանի՝ «Հարածքի հյուսիսային հատվածն ընկած է Կովկասյան բուսաաշխարհագրական մարզի տարածքում, որտեղ բնորոշ են բուսականության մեզոֆիլ (խոնավասեր) տեսակները:

Բնական պայմանների նման բազմազանության պատճառով այստեղ նպաստավոր

պայմաններ են ստեղծվել լեռնատափաստանային,

լեռնաանտառային և մերձալպյան, մասամբ նաև ալպյան բուսականության աճման և զարգացման համար: Տավուշի մարզի անտառային պետական ֆոնդը Հայաստանի ամենամեծ անտառածածկ տարածքներից է: Մարզը աչքի է ընկնում իր խիտ անտառներով, որոնք գրաղեցնում են զգալի տարածք և ունեն մեծ տնտեսական, էկոլոգիական և ռեկրեացիոն նշանակություն:

Տավուշի մարզի անտառները գրաղեցնում են շուրջ 140,000

հեկտար, ինչը կազմում է մարզի ընդհանուր տարածքի մոտ 50%-ը: Անտառային ֆոնդի հիմնական մասը կազմված է կաղնու, հաճարենու, բոխու և այլ թափողատերև ծառատեսակներից:

- Կաղնու անտառներ՝ տարածված են 400-800 մ բարձրությունների վրա:
 - Հաճարենու անտառներ՝ բնորոշ են 800-2000 մ բարձրությունների վրա:
 - Բոխու անտառներ՝ հանդիպում են առավել բարձրադիր հատվածներում:
 - Փշատերև ծառեր՝ սոճի և կեչունի տեսակներում:
- Դիլիջանի ազգային պարկի տարածքում:

Տավուշի մարզի անտառները հիմնականում ընդգրկված են պետական անտառային ֆոնդում, որը կառավարվում է «Հրազդական միջավայրի նախարարության ենթակայության տակ գործող «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից: Տավուշի մարզի անտառածածկ տարածքները տարածվում են մարզի գրեթե ամբողջ տարածքով՝ ընդգրկելով նրա տարբեր տարածաշրջաններ: Անտառածածկույթը հիմնականում տեղակայված է մարզի լեռնային և թիւրային հատվածներում, որտեղ գերակշռում են խոնավ կիման և բարենպաստ պայմանները:

Բուսական աշխարհ: Ըստ Հայաստանի ֆլորիստիկ շրջանների բաժանման (Թախտաջյան, 1954) նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Սևանա ֆլորիստիկ շրջանում, ուր բուսականությունն աչքի է ընկնում համակեցությունների բազմազանությամբ, տեսակային հարուստ կազմով: Այստեղ հաշվում է գրեթե 800-ից ավելի բուսատեսակ:

Անտառներ: Ստորին լեռնային գոտում (մինչև 1000 մ) լայնատերև անտառը ներկայացված է Բոխի արևելյանի (*Carpinus orientalis*) դոմինանտությամբ անտառներով: Հանդիպում են նաև Կաղնին վրացական (*Quercus iberica*), Հացենի սովորական (*Fraxinus excelsior*), Հացենի սրապտուղ (*F. oxycarpa*), Բոխի սովորական (*Carpinus betulus*), Թիւրկի վրացական (*Acer ibericum*), Թիւրկի դաշտային (*Acer campestre*), Թեղի մանրատերև (*Ulmus minor*) և այլն: Տարածքում հանդիպում են նաև տերևային նոսրանտառներ և գիհուտներ:

Դրանք տարածված են Աղստև գետի ձախակողմյան ափի հարավային թեքությունների



Վրա, որոնք հիմնականում աճում են էրոզիայի ենթարկված, քարքարոտ զարդարակի լանջերի վրա: Գիհուտներում հանդիպում է Գիհի բազմապտուղ (Juniperus polycarpus), Գիհի սեղմված (J. depressa) և Գիհի երկարատերև (J. oblonga): Տերևավոր նոսրանտառներում հանդիպում է Փոշնին կովկասյան (Celtis caucasica), Նշենի ֆենցլիի (Amigdalus fenzliana), Թխկի վրացական (Acer ibericum), Տանձենին կովկասյան (Pirus caucasica), Դժնիկ լուծողական (Rhamnus cathartica), ցախակեռաս կովկասյանը (Lonicera caucasica), մասրենու տեսակներ, ազնվամորին (Rubus idaeus), Թանթրվենի սևը (Sambucus nigra) և այլ:

Հաճարենու անտառները հիմնականում տարածվում են 900-2000մ բարձրության վրա գտնվող հյուսիսային զարդարակիերի վրա: Այստեղ անտառը ծևավորող հիմնական տեսակը Հաճարենին՝ արևելյան է (Fagus orientalis): Արևելյան հաճարենին սովորաբար կազմում է միատարր պուրակներ: Որոշ տարածքներում հանդիպում են խառը տիպի պուրակներ Բոխու սովորականի (Carpinus betulus), Լորենին սրտածի (Tilia cordata), Կաղամախու (Populus tremula), Տանձենի կովկասյանի (Pyrus caucasica), Կեռասենի անտառայինի (Cerasus avium), Արուենի սովորականի (Sorbus aucuparia), Թխկի բարձրեռայինի (Acer trautvetteri), Թխկի դաշտայինի (A. campestre) մասնակցությամբ: Հայաստանի հյուսիսային շրջաններում Կաղնի վրացականի (Quercus iberica) խառը անտառները գրադեցնում են 700-1100 (1200մ) բարձրությանները: 1200-1400մ-ից բարձր տարածքներում աճում է միայն արևելյան կաղնին (Quercus macranthera): Վերջինիս հիմնական ուղեկից տեսակներն են Բոխի սովորականը (Carpinus betulus), Բոխին արևելյանը (Carpinus orientalis), Թխկի վրացական (Acer ibericum), Թխկի դաշտային (Acer campestre), Հացենի սովորական (Fraxinus excelsior), Հացենի սրտապտուղ (F. oxycarpa), Լորենի սրտածն (Tilia cordata), Խնձորենի արևելյան (Malus orientalis), Տանձենին կովկասյան (Pyrus caucasica) և այլ տեսակներ: Մացառուտները, որտեղ ներկայացված են սովորական տիլիենի (Corilus avellana), Զկուենի սովորական (Mespilus germanica), Գերիմաստի սովորականը (Viburnum lantana) տեսակները, հանդիպում են հարավային լանջերին և բացատերում: Սոճի կոխի (Pinus kochiana =Pinus sylvestris ssp.hamata) ծառատեսակը հանդիպում է խառը անտառներում, երբեմն մեծ խմբերով կազմում է սոճուտ: Ենթալպյան անտառների մասին, որոնք բավականին լավ են ներկայացված Հյուսիսային Հայաստանի որոշ շրջաններում՝ ծովի մակարդակից 1800- 2200մ բարձրության վրա, բնութագրվում են կարճ (5-10մ) միայնակ կանգնած ծառերով, որոնք տիպ անհավասար ցրված են մարգագետինների ֆոնին: Կենի հատապտղայինը (Taxus baccata) բավական հաճախ է հանդիպում ազգային պարկի տարածքում սովորաբար առանձնյակների տեսքով: Աղավնավանք գյուղի մոտ պահպանվում է կենու բավական մեծ պուրակը: Այստեղ աճում են 300-400 տարեկան, մինչև 25 մ բարձրության և 75-80 սմ բնի տրամագծով կենու բազմաթիվ ծառեր: Շիբյակ Ազգային պարկի ցածրադիր վայրերում (մինչև 1100 մ) բավական փոքր տարածքների վրա բուսականության այս տիպում գերակշռում են Ցաքի փշոտը (Paliurus spina-christi): Հանդիպում են նաև Ծորենի սովորական (Berberis vulgaris), Զմենի ամբողջանոր (Cotoneaster integerrimus), Մասրենի շան (Rosa canina), Փոշնի կովկասյան (Celtis caucasica), Դժնիկ քաղցր (Rhamnus pallasii), հասմիկ թփուտային (Jasminum fruticans) և այլն:

Մարգագետիններ: Մարգագետինների մեծ մասն օգտագործվում է որպես արոտավայր: Ենթալպյան մարգագետինները տարածված են 2000-2100մ-ից բարձր: Հիմնական

համակեցությունները տարախոտային, տարախոտա-դաշտավլուկազգի են: Հացազգիներից հանդիպում է Կարճքտնուկ փետրած (Brachipodium pinnatum), Այծակն գլանած (Aegilops cylindrica), Գարի մանուշակագոյն (Hordeum violaceum), Խմբախոտ բուրավետ (Antoxanthum odoratum), Ուկեվարսիկ դեղնավուն (Trisetum flavescens), Բարակոտնուկ խոշորածաղիկ (Koeleria macrantha), Դաշտավլուկ մարգագետային (Poa pratensis), Ոզնախոտ կծկավոր (Dactylis glomerata) և այլն: Բարդածաղկավորներից՝ Տերեփուկ դեղնամանուշակագոյն (Centaurea cheiranthifolia), Տերեփուկ ուռատերև (Centaurea salicifolia), Հալսորուկ ամբողջատերև, (Senecio integrifolius), Անթեմ տրիխոմֆետի (Anthemis triumphalis), Հազարատերևուկ Բիբերշտեյնի (Achillea biebersteinii), Կակաչազգիներից՝ Կակաչ թռչող (Papaver fugax), Գնարբուկազգիներից է Գնարբուկ խոշորաբաժակ (Primula macrocalyx), Ակրանազգիներից՝ Քոսքսուկ կովկասյան (Scabiosa caucasica), Զիվան հսկայական (Cephalaria gigantea), Գորտնուկազգիներից՝ գորտնուկ լեռնային (Ranunculus oreophilus), Ընձախոտ արևելյան (Aconitum orientale), Բակլազգիներից՝ Կորնգան սրանավակ (Onobrychis oxytropoides), Տափոլու մարգագետնային (Lathyrus pratensis), Երեքնուկ նման (Trifolium ambiguum), Երեքնուկ դաշտային (Trifolium campestre) Շուշանազգիներից՝ Շուշան հայկական (Lilium armatum), Զանգակազգիներից՝ զանգակ խմբված (Campanula glomerata), Շրթնածաղկազգիներից՝ Խոլ եղինջ ցողունագիրկ (Lamium amplexicaule), Խոլեղինջ սպիտակ (Lamium album), Արելախոտ բալանզայի (Stachys balansae), Թթվիճ խոշորածաղիկ (Betonica macrantha), Գողտրիկազգիներից՝ Մոմախոտ փոքր (Cerinthe minor), Կաղամբազգիներից՝ Զագախոտ գեղեցիկ (Erysimum pulchellum), Վառվորուկ բաժակային (Alyssum alyssoides), Ասպլենազգիներից՝ Ասպլեն հյուսիսային (A. septentrionale) այլն: Պետրոֆիլ բուսականությունը ներկայացված է մի շարք ընտանիքներով: Թանձրատերևազգիներից հանդիպում է թանթռնիկ կովկասյան (Sedum caucasicum), Թանթռնիկ հակադրատերև (Sedum oppositifolium), Քարբեկազգիներից հանդիպում է Քարբեկ եռմատնանի (Saxifraga tridactylites), Քարբեկ գիհատերև (Saxifraga juniperifolia), Բարդածաղկավորներից՝ Խինձ կոշտ (Scorzonera rigidula), Հալսորուկ ճարճուկատերև (Senecio erucifolius) և այլն:

Զրա-ճահճային բուսականություն: Սովորաբար այս զրասեր համակեցություններում հանդիպում են ուռենի սպիտակ (Salix alba), բարդի սև (Populus nigra): Խոտաբույսերից հանդիպում են Կնյուն բաժանված (Juncus effusus), Բոշխ կարճամազ (Carex hirta), Բոշխ փքված (Carex rostrata), Գորտնուկ դաշտային (Ranunculus arvensis) և այլն: << Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ << Տավուշի մարզում հանդիպող 50 բուսատեսակ ընդգրկված են Հայաստանի բոյսերի Կարմիր գրքում: «Դիլիջան ազգային պարկի» տարածքում աճում են 29 կարմիրգրքային բուսատեսակ: Դրանցից են՝ Պսեֆելուս դեբեդի (Psephellus debedicus) (EN), Պոպովիկ Մարշալի (Corydalis marschalliana) (EN), Վարդապետիկ դժգույն (Muscari pallens) (EN), Արքայածաղիկ բլրակային (Fritillaria collina) (EN), Էպիպոգիում անտերև (Epipogium aphyllum) (EN), Բանադու Բրաունի (Polystichum braunii) (EN), Հողմածաղիկ գորտնուկային (Anemone ranunculoides) (EN), Թեզիում փռված (Thesium procumbens) (EN), Եզնակող Կողո-Պոլյանսկու (Bupleurum koso-poljanskij) (VU), Գնարբուկ սքանչելի (Primula amoena) (VU), Շիկատակ (Atropa bella-donna) (VU), Կենի հատապտղային (Taxus baccata) (VU), Շյուղախոտ անտառային (Festuca drymeja) (VU) և այլն: <

այստեղ էնդեմներ են Եզնակող Կողո-Պոլյանսկու (Bupleurum kosopoljanskyi), Պսեֆելուս դեբեդի (Psephellus debedicus), Պսեֆելուս փամբակի (Psephellus pambakensis), Խլածաղիկ Օլգայի (Scrophularia olgae), Կտավախոտ զանգեզուրի (Linaria zangezura), Մարենի Սոսնովսկու (Rosa sosnovskyana), Շնդեղ Գոհարի (Colchicum goharae), Տանձենի Փյոդոռովի (Pyrus fedorovii Kut.), Ճայկոտոց Սոսնովսկու (Erodium sosnowskianum Fed.) և այլն:

Հարկ է նշել, որ Ծրագրի տարածքին հարակից հատվածում բացակայում են Կարմիր գրքային բուսատեսակները:

Կենդանական աշխարհ: Կենդանական աշխարհի ուսումնասիրությունը կատարվել է բուսական աշխարհին զուգահեռ: Թոշող կենդանիների թոփքի ձևը (տեղաշարժվելու բնույթը), առանձին կենդանիների արձակած ձայները կամ կենսագործունեության արդյունքները կարող են տեղեկությունները հաղորդել այդ կենդանիների ներկայության մասին: Թոշունները սովորաբար դիտարկվում են հեռադիտակով և տեղում համեմատվում թոշունների դաշտային ուղեցույցի տվյալների հետ (Մարտին Ս: Աղամյան, Դանիել Քլեմ Կրտսեր „Հայաստանի թոշունները,, դաշտային ուղեցույց, ISBN: 0-9657429-5-4): Քանի որ կենդանիները տարածության մեջ տեղաշարժվում են և միշտ չեն հնարավոր տեսնել դրանց, կատարվել են նաև հարցումներ տեղաբնակների շրջանում:

Անողնաշարավորներ: Դիլջան ազգային պարկի տարածքից հայտնի է բգեզների (Coleoptera) 512 տեսակ, որոնք պատկանում են 44 ընտանիքների 296 ցեղերին: Ցերեկային թիթեռները պարկում ներկայացված են 7 ընտանիքների 68 ցեղերին պատկանող 122 տեսակներով: Մրջուններից (Formicidae) պարկում հայտնաբերվել է 10 ցեղերի պատկանող 29 տեսակ: Ողնաշարավորներ Զկներ «Դիլջան» ազգային պարկով հիսող Աղստև գետում հայտնաբերվել են կարմրախայտը (Salmo trutta fario), Սևանի կողակը (Capoeta sevangi), արևելյան տառեխիկը (Alburnoides eichwaldii), Քուտի կողակը (Capoeta capoeta capoeta), քուտի բեղլու (Barbus lacerta cyri), կովկասյան թեփուղը (Squalius cephalus orientalis) և այլն: Հաղարծին գետում հանդիպող հիմնական ձկնատեսակն է կարմրախայտը (Salmo trutta fario): Բլդան գետում հանդիպում են կարմրախայտ (Salmo trutta fario), Քուտի բեղլու (Barbus lacerta cyri), արևելյան տառեխիկ (Alburnoides eichwaldii) և, երբեմն, կողակ (Capoeta sp.): Գետիկ գետում հանդիպում են կարմրախայտ (Salmo trutta fario), Քուտի բեղլու (Barbus lacerta cyri), արևելյան տառեխիկ (Alburnoides eichwaldii) և կողակ (Capoeta sp.): Պարզ լիճը արհեստականորեն բնակեցրած է արծաթափայլ կարասով (Carassius auratus gibelio) և կարպով (Cyprinus carpio): Երկկենցաղներ և սողուններ Ազգային պարկի տարածքում հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ՝ լճագորտը (Pelophilax ridibundus), փոքրասիական գորտը (Rana macrocnemis), կանաչ դոդոշը (Bufo viridis), Շելկովնիկովի սովորական ծառագորտը (Hyla arborea schelkownikovi): Աղստև գետի առափնյա ժայռերի վրա տարածված են ժայռային մողեսների երկու երկսեռ տեսակներ՝ Ռադեվսկի (Darevskia raddei) և քուտի (D. portschinskii) մողեսները: Հանդիպում են նաև Դալի մողեսը (Darevskia dahl), Ռոստոմբեկովի մողեսը (D. rostombekovi), մարգագետնային մողեսը (D. praticola): Անտառային գոտու բացատներում ոչ մեծ քանակությամբ հանդիպում են ճարպիկ մողեսը (Lacerta agilis) և շերտավոր մողեսը (L. strigata): Տարբեր ջրաճահճային էկոհամակարգերում գրանցվել է ջրային լրտուն (Natrix tessellata): Կան ճահճային կրիա (Emys orbicularis), դեղնափորիկ (Pseudopus apodus), որդանման կույրօձ (Typhlops vermicularis), սովորական լրտուն (Natrix natrix): Թոշուններ «Դիլջան» ազգային պարկում տարվա տարբեր

սեզոններին հանդիպում է թռչունների մոտ 190 տեսակ, որոնցից մոտ 130-ը այստեղ բնադրում են: Ազգային պարկում բնադրող թռչունների մեծամասնությունը ներկայացված է անտառային տեսակներով: Այստեղ լայն տարածված են հոբալը (*Columba oenas*), անտառային աղավնին (*Columba palumbus*), փայտփորների վեց տեսակ՝ վիզգումկը (*Jynx torquilla*), կանաչ (*Picus viridis*), սև (*Dryocopus martius*), խայտաբղետ (*Dendrocopos major*), միջին (*D. medius*) և փոքր (*D. minor*) փայտփորները, եղնջաթռչնակը (*Troglodytes troglodytes*), անտառային նրբագեղիկը (*Prunella modularis*), արշալուսիկը (*Erythacus rubecula*), սովորական կարմրատուտը (*Phoenicurus phoenicurus*), սոսնձակեռնեխը (*Turdus viscivorus*), սև (*T. merula*) և երգող (*T. philomelos*) կեռնեխները, սևագլուխ (*Sylvia atricapilla*) և այգու (*S. borin*) շահրիկները, դեղնափոր (*Phylloscopus trochiloides*) և ծնկլտան (*Ph. collybita*) գեղգեղիկները, փոքր (*Ficedula parva*) և կիսասպիտակավիզ (*F. semitorquata*) ճանճորսները, երկարագի (*Aegithalos caudatus*), սև (*Parus ater*), երկնագույն (*P. caeruleus*) և մեծ (*P. major*) երաշտահավերը, սովորական սիտեղը (*Sitta europaea*), ծվծիկը (*Certhia familiaris*) և անտառային կաշաղակը (*Garrulus glandarius*): Սերինոսներից լայն տարածված են ամուրիկը (*Fringilla coelebs*), կանաչ սերինոսը (*Carduelis chloris*), սովորական խածկտիկը (*Pyrrhula pyrrhula*) և հատրեկիչը (*Coccothraustes coccothraustes*), ականջավոր բուն (*Asio otus*) ծայները: Ցերեկային գիշատիչ թռչուններից այստեղ բնադրում են օձակեր արծիվը (*Circaetus gallicus*), կրետակերը (*Pernis apivorus*), ցախաքլորառը (*Accipiter gentilis*), լրաճուտակը (*A. nisus*), մեծ ճուռակը (*Buteo buteo*), փոքր ենթաարծիվը (*Aquila pomarina*) և գաճաճ արծիվը (*Hieraetus pennatus*): Անտառամերձ բացատներում և մացառուտներում հանդիպում են այծկիթը (*Caprimulgus europaeus*), անտառակցարը (*Scolopax rusticola*), սովորական տատրակը (*Streptopelia turtur*), անտառային արտուպտը (*Lullula arborea*), անտառային ծիաթռչնակը (*Anthus trivialis*), սևագլուխ քչքանը (*Saxicola torquatus*), ճուռականման (*Sylvia nisoria*), մորու (*S. curruca*) և մոխրագույն (*S. communis*) շահրիկները, կովկասյան գեղգեղիկը (*Phylloscopus sindianus*), ժուկանը (*Lanius collurio*), ոսպնուկը (*Carpodacus erythrinus*), կանեփնուկը (*Carduelis cannabina*) և սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala*): Աղստև և Գետիկ գետերի հովիտների բաց ջրային տարածքներում և արհեստական լճակների ափերին հանդիպում են կարմրատն (*Tringa tetanus*), սևուկ (*T. ochropus*) և սպիտակավիզ (*Actitis hypoleucos*) կցցարները, երկնագույն ալկիոնը (*Alcedo atthis*), լեռնային խաղտտնիկը (*Motacilla cinerea*) և ջրաճնճողուկը (*Cinclus cinclus*): Գետերի ափամերձ թփուտներում և ճահճուտներում բնադրում են հարավային սոխակը (*Luscinia megarhynchos*), լայնապոչ եղեգնաթռչնակը (*Cettia cetti*), այստեղի խոնավ մարգագետինները գրավում են դեղին խաղտտնիկին (*Motacilla flava*), շերտագլուխ (*Acrocephalus schoenobaenus*) և ճահճային (*A. palustris*) եղեգնաթռչնակներին և սովորական ճոհկահավին (*Locustella naevia*), ինչպես նաև այստեղ կեր հայթհայթող մեղվակերին (*Merops apiaster*) և առափնյա ծիծեռնակին (*Riparia riparia*): Առափնյա անտառին բնորոշ տեսակներից են արտուպտաբազեն (*Falco subbuteo*), մոխրագույն ճանճորսը (*Muscicapa striata*), ճոճահավը (*Remiz pendulinus*), պիրոլը (*Oriolus oriolus*) և սևաճակատ շամփրուկը (*Lanius minor*): Պարկում ամենուրեք հանդիպում են քարքարոտ ելքեր, ժայռեր իսկ ջրբաժանների կատարների երկայնքով՝ նաև ժայռաբեկորների թափվածքների դաշտեր: Ցածրադիր գոտում այս կենսամիջավայրին են բնորոշ գիշանգղը (*Neophron percnopterus*), բվեճը (*Bubo bubo*),

ներկարարը (*Coracias garrulus*), թխակապոյտ աղավնին (*Columba livia*), ժայռային (*Ptyonoprogne rupestris*) և քաղաքային (*Delichon urbicum*) ծիծեռնակները, սևախայտ քարաթռչնակը (*Oenanthe hispanica*), կապոյտ քարակեռնեխը (*Monticola solitarius*), ժայռային փոքր սիտեղը (*Sitta neumayer*), ժայռային ճնճղովը (*Petronia petronia*), այզու (*Emberiza hortulana*) և լեռնային (*E. cia*) դրախտապանները: Բարձր լեռնային գոտու ժայռերին և մերձակա լեռնային տափաստաններին և մարգագետիններին բնորոշ են կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczi*), վայրի հնդկահավը կամ ովարը (*Tetraogallus caspius*), սովորական կկուն (*Cuculus canorus*) և այլնա; Լեռնային մարգագետինների այլ տարածված տեսակներից են մոխրագույն կաքավը (*Perdix perdix*), մարգահավը (*Crex crex*), դաշտային արտույտը (*Alauda arvensis*), լեռնային ձիաթռչնակը (*Anthus spinoletta*) և մարգագետնային չքչանը: Զրային թռչուննեից չուի ժամանակ այստեղ հանդիպում են փոքր ջրցուը (*Ixobrychus minutus*), սպիտակ փոքր (*Egretta garzetta*), մոխրագույն (*Ardea cinerea*) և շիկակարմիր (*A. purpurea*) տառեղները, սև (*Ciconia nigra*) և սպիտակ (*C. ciconia*) արագիլները, փոքր քարադրը (*Charadrius dubius*), սովորական կիվիվը (*Vanellus vanellus*), մորակցարը (*Gallinago gallinago*), ծիսագույն կցցարը (*Tringa nebularia*), սովորական (Larus ridibundus) և հայկական (*L. armenicus*) որորները, սպիտակապտ (*Chlidonias hybrida*) և սպիտակաթև (*Ch. leucopterus*) ջրածիծառները, դեղնագլուխ խաղտտնիկը (*Motacilla citreola*): Զմոան ամիսներին ազգային պարկի ցածրադիր գոտում հանդիպում են հյուսիսից այցելող ձմեռող տեսակներ, ինչպիսիք են՝ փոքր սուզակը (*Tachybaptus ruficollis*), դաշտային մկնաճուռակը (*Circus cyaneus*), թավշառն ճուռակը (*Buteo lagopus*), աղավնաբազեն (*Falco columbarius*), սինակեռնեխը (*Turdus pilaris*), դեղնագլուխ արքայիկը (*Regulus regulus*), մոխրագույն շամփրուկը (*Lanius excubitor*), սովորական սերինոսը (*Fringilla montifringilla*), զնվասարեկը (*Carduelis spinus*), սովորական (*Emberiza citrinella*) և եղեգնուտի (*E. schoeniclus*) դրախտապանները: Կաթնասուններ Ազգային պարկի տարածքից ներկայում հայտնի են 55 տեսակի կաթնասուններ: Այստեղ հանդիպում են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), թփութային դաշտամուկը (*Microtus majori*), որը կովկասյան էնդեմիկ տեսակ է, անտառային քնամոլը (*Dryomys nitedula*), պոլչուկը (*Glis glis*), դեղնակուրծք մուկը (*Apodemus ponticus*), որը կովկասյան էնդեմիկ տեսակ է, փոքր անտառային մուկը (*Apodemus uralensis*), մակերդոնական մուկը (*Mus macedonicus*), պարսկական կամ կովկասյան սկյուռը (*Sciurus anomalus*), անտառակատուն (*Felis silvestris silvestris*), լուսանը (*Lynx lynx*) և գորշ արջը (*Ursus arctos*): Սովորական են այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Անտառաբնակ չոջիկներն են լայնականջ ծալքաշուրթ չոջիկը (*Tadarida teniotis*), փոքր իրիկնաչոջիկը (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաչոջիկը (*Nyctalus noctula*), եվրոպական լայնականջ չոջիկը (*Barbastella barbastellus*), անտառային կամ Նատուրալիուսի փոքրաչոջիկը (*Pipistrellus nathusii*), գորշ ականջեղ չոջիկը (*Plecotus auritus*): Քարքարոտ վայրերում կարող են գրանցվել սրականջ գիշերաչոջիկը (*Myotis blythii*) և եռագույն գիշերաչոջիկը (*Myotis emarginatus*): Մարգագետիններում և բացատներում լայնորեն տարածված են եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*), ձնային դաշտամուկը (*Chionomys nivalis*), սպիտակափոր սպիտակատամը (*Crocidura leucodon* = *C. persica*), փոքր սպիտակատամը (*Crocidura suaveolens*), աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles canescens*), քարակզարիսը (*Martes foina*) և աքիսը (*Mustela nivalis*): Զրամերձ տարածքներում գրանցվում

Են ջրային դաշտամուկը (*Arvicola amphibius* = *A. terrestris*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys teres* = *N. schelkovnikovi*), որը Կովկասյան էնդեմիկ տեսակ է, բեղավոր գիշերաչղթիկը (*Myotis mystacinus*): Ամենուրեք տարածված են Ռադդեի գորշատամը (*Sorex raddei*), Սատունինի գորշատամը (*Sorex satunini* = *S. caucasica stavropolica*), Վոլնուխինի գորշատամը (*Sorex volnuchini*), որոնք Կովկասյան էնդեմիկ տեսակներ են, սպիտակափոր ոզնին (*Erinaceus concolor*), փոքր խլուրդը *Talpa levantis* և գայլը (*Canis lupus*): Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված են Դիլջան ազգային պարկի տարածքում հանդիպող Թեփուկաթևավորներից Ապոլոնը (*Parnassius apollo kashtshenkoi* Sheljuzko, VU Alcde), Ավետյանի երկրաչափ թիթեռը (*Cidaria avetiana* Wardikian, EN B Ia+B2a), Ալկոն կապտաթիթեռը (*Maculinae alconmontocola* Staudinger, VU B Ia+B2a): Տարածքում կան կարմիրգրքային միջատներից Կաղնու մեծ երկարաբեղիկը (*Cerambyx cerdo acuminatus* Motsch., VU B Ia+ B 2a), Ալպյան ռոզալիան (*Rosalia alpina* L., EN B Ia+B2a): Աղսու գետում հանդիպող Աևանի կողակը (*Caproeta sevangi*) (VU) գրանցված է Կարմիր գրքում, Հայաստանի էնդեմիկ է: Սողոններից այս տարածքում հանդիպում են *Darevskia* ցեղի ժայռային մողեսներից Դալլի մողեսը (*Darevskia dahlii* EN B1a+2a), Ռոստոմբեկովի մողեսը (D. rostombekovi) (EN B 2ab ii, iii) և մարգագետնային մողեսը (D. praticola) (VU B1ab (iii)+2a) գրանցված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում: Ազգային պարկում հանդիպող թռչունների 36 տեսակ գրանցված են Հայաստանի կարմիր գրքում, որոնցից 11-ը ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության կարմիր ցուցակում: Կա Կովկասյան մեկ էնդեմիկ տեսակ՝ կովկասյան մարեհավ (*Tetrao mlokosewiczi*) և Հայկական բարձրավանդակի էնդեմիկ մեկ տեսակ՝ հայկական որոր (*Larus armenicus*): ՀՀ կարմիր գրքում նշված են կովկասյան ազնվացեղ եղերուն (*Cervus elaphus maral* CR D), գորշ արջը (*Ursus arctos* VU B2ab (iii, iv)), անտառակատուն (*Felis silvestris* VU B1 ab(iii, iv)), Շելկովնիկովի կուտորան (*Neomys schelkovnikovi* (EN B1a+2a), ջրասամույրը (*Lutra lutra* EN D), ասիական լայնականց չղթիկը (*Barbastella leucomelas* VU B1ab (iii)), ծալքաշուրթ լայնականց չղթիկը (*Tadarida teniotis* DD), սովորական երկարաթև չղթիկը (*Miniopterus schreibersi* VU B1ab (iii)+2ab(iii)), գորշ ականջեղ չղթիկը (*Plecotus auritus* VU B1a): Անդրկովկասի էնդեմ է անդրկովկասյան կուրամկնիկը (*Ellobius lutescens*): Շելկովնիկովի կուտորան (*Neomys schelkovnikovi*) (էնդեմ), թփուտային դաշտամուկը (*Microtus majori*), դեղնակուրճը մուկը (*Apodemus flavicollis*), Ռադդեի (*Sorex raddei*), կովկասյան կամ Սատունինի (*Sorex satunini*) և Վոլնուխինի (*Sorexs volnuchini*) գորշատամները, Դաղստանի դաշտամուկը (*Microtus daghestanicus*) կովկասյան էնդեմներ են: Գործունեության ենթակա տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանական աշխարհի բնադրավայրեր, ինչպես նաև բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

4.7 Պատմության և մշակութային հուշարձաններ

Տավուշը հայտնի է իր պատմամշակութային հուշարձաններով: Տավուշի մարզում կա մոտ 150 պատմամշակութային հուշարձան: Այս հուշարձանները ներառում են եկեղեցիներ, վանքեր, ամրոցներ, մատուռներ, խաչքարեր և այլ մշակութային արժեքներ, որոնք ցուցադրում են մարզի պատմությունը, ճարտարապետությունը և մշակույթը, որոնցից են օրինակ՝ Դիլջանի ազգային պարկը, Խաչախնք վանքը, Դովյան վանքը, Նոյեմբերյանի ամրոցը, Բերդի ամրոցը, Հաղպատ վանքը և այլն: Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. հունվարի

29-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N1929 -Ն որոշմամբ հաստատված ցանկի, նախատեսվող գործունեության տարածքում մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն: Դիլիջան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ անշարժ հուշարձանների ցանկը, որպես քաղվածք ՀՀ Կառավարության 30.12.2004թ-ի N 1929-Ն որոշման հավելվածից, ներկայացված է սույն հաշվետվության 9-րդ հավելվածում:

4.8 Բնության հուշարձաններ

Բնության հուշարձաններ: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն Տավուշ մարզում առկա են հետևյալ բնության հուշարձաններ՝¹

	Երկարաբանական հուշարձաններ	
96.	«Մոլլաքար» ժայռ	Տավուշի մարզ, Իջևան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Իջևան-Երևան խճուղու ձախ կողմում
97.	«Անանուն» պլազմիոգրանիտներ	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, անտառունտեսության մոտ
98.	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Բերդ ավանի հս-արմ եզրին
99.	«Անանուն» փոխակերպարային (մետամորֆիզացված) թերթաքարեր	Տավուշի մարզ, Վարագաձոր գետի վերին հոսանքում, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հվ-արմ
100.	«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 1.5 կմ հվ
101.	«Անանուն» սյունաձև էքստրուզիվ մարմին՝ նեկկ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 2 կմ հվ
102.	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արև. Տավուշ գետի ձախ վտակի հովտում
103.	«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողը գյուղից 4 կմ հարավ
104.	«Անանուն» կվարցային դիորիտներ և գաբրո-դիորիտներ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արև. Տավուշ գետի կիրճի աջ լանջին
105.	«Անանուն» շերտագրական մերկացում	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արև եզրին
	Կենսաբանական հուշարձաններ	
106.	«Անանուն» սանդղափուլ քարակիներ	Տավուշի մարզ, Չինչին գյուղից 2.0 կմ հվ-արմ
15.	«Նոյեմբերյանի սոսի»	Տավուշի մարզ, քաղ. Նոյեմբերյան, Չինչարաձորում

16	«Վարդան կաղնի»	Մամիկոնյանի	Տավուշի մարզ, գ. Ակնաղբյուր, ծ.մ-ից 900 մ բարձրության վրա
17	«Սարի գյուղի սոսի»		Տավուշի մարզ, գ. Սարիգյուղ, Երևան-Նյեմբերյան ճանապարհից աջ, ծ.մ-ից 750 մ բարձրության վրա
18	«Գետահովիտի մամուպատ ժայռ»		Տավուշի մարզ, Գետահովիտ գյուղի մոտ, Սառնաջուր գետի ծախ ափին, մոտ 700-800 մ բարձրության վրա
19	«Տանձուտ»		Տավուշի մարզ, Աղավնավանք գյուղի մոտ

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները բացակայում են:

4.9 Հատուկ պահպանվող տարածքներ

Մարզում ստեղծվել են բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ), այդ թվում՝ մեկ ազգային պարկ, 5 արգելավայր և 2 դենդրոպարկ (Իջևանի դենդրոպարկ, Բերդի սորաններ):

«Դիլիջան» ազգային պարկ Ստեղծվել է՝ 2002 թ. (1958թ. ստեղծված Դիլիջան պետական արգելոցի հիման վրա)

Տարածքը՝ 33765 հա

Վայրը՝ Տավուշի մարզ

Բարձրությունը՝ 1070-2400 մ ծովի մակարդակից բարձր:

Ազգային պարկի նպատակն է ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության, պատմամշակութային ժառանգության պահպանումը, ինչպես նաև համահունչ տնտեսական զարգացումը: Մանավորապես՝ հաճարենու և կաղնու մեզոֆիլ անտառների, կենու եզակի պուրակի, կովկասյան մայրենավի, գորշ արջի և այլ տեսակների, ինչպես նաև բնական և պատմաճարտարապետական հուշարձանների պահպանություն: Պարկի տարածքում են գտնվում Պարզ և Գոշ (տղրկա) լճերը, Աղավնավանքի կենու պուրակը, հանքային ջրի աղբյուրներ: Պարկի տարածքը հարուստ է նաև պատմամշակութային հուշարձաններով: Այստեղ առկա են պատմության և մշակույթի հուշարձաններ՝ քաղաքատեղիներ, գյուղատեղիներ, կամուրջներ, եկեղեցիներ, վանական համալիրներ, մատուռներ: Այստեղ է գտնվում միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային կենտրոններ հանդիսացող Հաղարծին վանքը (11-13-րդ դարեր) և Գոշավանքը (Նոր Գետիկի վանք 12-13-րդ դարեր): Պարկի տարածքում է գտնվում Մաթոսավանքը (10-13-րդ դարեր), Զովստակ վանքը (12- 13-րդ դարեր), Աղավնավանքի և Աստվածածին անապատ եկեղեցին (11- 13-րդ դարեր):



Տավուշի մարզում են գտնվում Իջևանի, Արջատիլենու, Գանձաքարի-Վերին Աղդանի,

Զիկատարի, Ախնաբաղի կենու պուրակ պետական արգելավայրերը: Սակայն նշված արգելավայրերը գտնվում են Ծրագրի ազդման գոտուց հեռու և իրենց վրա չեն կրելու որևէ բացասական ազդեցություն:

4.10 Նախատեսվող գործունեության իրականացման մարզի և համայնքի սոցիալ-տնտեսական ամփոփ նկարագիր

Դիլիջան համայնք. Դիլիջանը գտնվում է Հայաստանի արևելքում՝ Տավուշի մարզում, և հանդիսանում է մարզի երկրորդ խոշոր քաղաքը: Այն գտնվում է մոտ 130 կմ հեռավորության վրա Հայաստանի մայրաքաղաք Երևանից և 20 կմ հեռու է ՀՀ սահմաններից՝ հարավ-արևմուտք՝ Հայաստանի սահմանը սահմանակից է Վրաստանին:

Գեղգրաֆիա: Դիլիջանը տեղակայված է Դիլիջանի լեռներում, որոնց մեջ ձգտում են բազմաթիվ կիրճեր ու դաշտավայրեր, և շրջապատված է հարուստ բնությամբ՝ հիանալի գետերով, լճերով, անտառներով և ազգային պարկերով: Դիլիջանի ազգային պարկը հանդիսանում է ՀՀ ամենախոշոր ազգային պարկերից մեկը, որն ընդգրկում է մոտ 24,000 հեկտար տարածք:

Պատմություն: Դիլիջանը պատմականորեն եղել է կարևոր կոմերցիոն և մշակութային կենտրոն: Քաղաքը հայտնի է որպես «Հայաստանի Շվեյցարիա»՝ իր գեղեցիկ բնությամբ և առողջարանային նշանակությամբ: Դիլիջանը դարձել է առողջարանային տարածք դեռևս 19-րդ դարի կեսերին, երբ սկսեցին զարգանալ բուժիչ քաղաքություններով սառը աղբյուրները:

Տարածություն և բնակչություն: Դիլիջանը տարածվում է 38.5 քառ. կմ տարածքում: 2022 թվականի տվյալներով, քաղաքի բնակչությունը մոտ 30,000 մարդ է, և վերջին տարիներին այն զարգանում է հատկապես զբոսաշրջության ոլորտում:

Կառավարում: Դիլիջանը հանդիսանում է Տավուշի մարզի ինքնավար համայնք: Մարզի տարածքային կառավարման մասով քաղաքը գտնվում է քաղաքապետարանի ղեկավարմամբ: **Մշակույթ և զբոսաշրջություն:** Դիլիջանը հայտնի է իր մշակութային ժառանգությամբ և մի շարք հնագիտական ու պատմամշակութային հուշարձաններով: Քաղաքում կա նաև մի շարք մշակութային կենտրոններ և թանգարաններ, ինչպես նաև բազմաթիվ հյուրանոցներ, հանգստավայրեր ու առողջարաններ:

Անվանի վայրեր: Դիլիջանի ազգային պարկ – Մինչ այժմ պահպանվող բնության արժեքներ, զբոսաշրջության համար խիստ կարևոր վայր:

Հին Դիլիջան – Դիլիջանի հին մասում, որտեղ պահպանվում են ավանդական հայ ճարտարապետական ծներ:

Դիլիջանի սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի – Ներկայումս գործող եկեղեցի, որը կարևոր պատմական արժեք ունի:

Միմինո հուշարձանը – Ֆիլմի «Միմինո» հերոսների հուշարձանը, որը տեղակայված է քաղաքում:

Տրանսպորտ և հասանելիություն: Դիլիջանը հարավային ճանապարհներով կապված է Երևանի հետ, իսկ Թալինի և Դիլիջանի ուղղություններով կան երթուղիներ: Տեղում գործող ավտոբուսները և մասնավոր տաքսիները ապահովում են հարակից շրջանների հետ փոխադրումներ

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՀՉՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ,
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀՈՒԺՈՒՄՆԵՐ)

5.1 Գործունեության ընդհանուր նկարագիր և տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Քաղաք Դիլիջան, Պարզ լճի փողոց 26 հողամաս (կադաստրային ծածկագիր 11-003-0674-0061) հասցեում նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր համաձայն Դիլիջանի քաղաքապետարանի կողմից տրված՝ 11.01.2024 Ն Ա1-11 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և պատվիրատուի կողմից ներկայացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման Ն 26062023-11-0027 վկայականի հիման վրա:

Նախագծի համար նախատեսված տարածքը 0,7901 հա չկառուցապատված հողամաս է: Տարածքից դեպի հյուսիս գտնվում է Հայաստանի Հանրապետությանը պատկանող հողամասը, հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան կողմերից Պարզ լճի փողոցը, մնացած կողմերից ազգային պարկի հողերը:

Նախատեսվում է տարածքում կառուցել բազմաֆունկցիոնալ համալիր, որը բաղկացած է 2 շինություններից, իր մեջ ներառելով բնակելի և հասարակական հատվածներ: Նախատեսվում է ավտոկայանատեղի՝ բաղկացած 87 տեղից: Նախատեսվում է նաև լողավազան և հանգստի օժանդակ շինություն: Առաջարկվում է տարածքում նախատեսել մանկական խաղահրապարակ, մարզահրապարակ, հանգստի գոտի, կանաչ տարածքներ:

Տափակ մարզ, համայնք Դիլիջան, ք. Դիլիջան, Պարզ լճի փողոց թիվ 26 հողամասում «Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի »-ի (Մացնաշենք «Ա») նախագծի կոնստրուկտորական մասը կատարված է համաձայն ճարտարապետական առաջադրանքի և Հայաստանի Հանրապետության գործող շինարարական նորմերին համապատասխան: Համաձայն ինժեներա-երկրաբանական եզրակացության տարածքի կիմայական պայմանները հետևյալն են՝

- օդի առավելագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է +38,1°C, իսկ
- բացարձակ նվազագույնը՝ -22,8 °C,
- տեղումների տարվա միջին քանակը հավասար է 103մմ,
- քամու արագությունը քսան տարվա մեջ հնարավոր է 22մ/վրկ,
- քամու ուժը 27կգ/մ2,
- գրունտների սառեցման առավելագույն խորությունը կազմում է 47 սմ,
- ծյան նորմատիվային ճնշումը 50կգ/մ,
- օդի տարեկան միջին խոնավությունը կազմում է 61%,
- գրունտային ջրեր չեն նկատվել:

Որպես հիմնատակ ծառայում է երկրորդ շերտի գրունտը (ավազակավ պինդ) հետևյալ ֆիզիկոմեխանիկական բնութագրերով

- խտությունը՝ $P_{00} = 1,67$ տ/մ3,
- գրունտի հաշվարկային դիմադրությունը՝ $R_o = 2,3$ կգ/սմ2,

- հարթակի գործակիցը $C = 4000,0$ Օտ/մ:

Համաձայն երկրաբանական եզրակացության, գրունտները ըստ սեյսմիկ հատկությունների պատկանում են երկրորդ կարգին:

Շենքը միաձոյլ երկաթբետոնե շրջանակային հիմնակմախքով կառուց է: Հատակագծում ունի ուղղանկյուն ուրվագիծ: Շենքն 1-ից մինչև 4 առանցք ունի երեք վերգետնյա հարկեր և ձեղնահարկ իսկ 4-րդ առանցքից սկսած չորս վերգետնյա հարկեր և ձեղնահարկ: Առաջին հարկի բարձրությունը 3,9 մետր է մնացած հարկերի բարձրությունները հավասար են 3,30 մետրի:

Կառուցը ունի վեց երկայնական ($6,60 \times 6$) և երեք լայնական ($6,60, 6,00, 6,60$) թռիչքներ:

Հիմքի նախապատրաստական շերտը իրականացված է խամքարաբետոնով B15 դասի բետոնի վրա: Հիմքերը միաձոյլ երկաթբետոնե կողավոր սալ է: Սալի հաստությունը հավասար է 300մմ: Հեծանները լայնական կտրվածքում ունեն հետևյալ չափերը՝ 1000մմ. x 900մմ.(հ):

Սյուները՝ միաձոյլ երկաթբետոնից են և լայնական կտրվածքում ունեն հետևյալ չափերը՝ քառակուսի 500մմ. x 500մմ, ուղղանկյուն 500մմ. x 1000մմ: Ըստ բարձրության սյուների կտրվածքային չափերը փոփոխության չեն ենթարկվում:

Ձեղնահարկում սյուների կտրվածքային չափն ընդունվել է 300մմ. x 300մմ:

Հեծանները միաձոյլ երկաթբետոնից են և լայնական կտրվածքում ունեն հետևյալ չափերը՝ 500մմ. x 600մմ.(հ):

Ծածկերը՝ միաձոյլ երկաթբետոնից են: Ծածկի հաստությունը հավասար է 170մմ:

Ծածկերըն ամրանավորվել են երկշերտ ամրանային ցանցով, ամրանների քայլը՝ 200մմ:

Աստիճաններ միաձոյլ երկաթբետոնից են աստիճանաքայլ հարթակներով: Հարթակի հաստությունը՝ 170մմ: Հարթակը ամրանավորված է երկշերտ ամրանային ցանցով, քայլը 200մմ:

Հիմքից մինչև -0,10 նիշ իրականացված են երկաթբետոնե: Պատերի հաստությունը 300մմ իսկ բարձրությունը 900մմ:

Ամրանարված են երկշերտ ամրանային ցանցով: Ամրանների քայլը 200մմ:

Կառուցում օգտագործվող ամրանները A500C դասի են իսկ բետոնը B25 դասի ծանր բետոն:

Կառուցի պատերն իրենցից ներկայացնում են հիմնակմախքի լցաշար ամրացված ճկուն կապերով: Ծարվածքն ամրանավորված է և իրականացվում է թեթև բետոնից սնամեջ բլոկերով:

Էլեկտրաեռակցման աշխատանքները կատարել TOCT14098-85 պահանջների համաձայն, 3 -50A տիպի էլեկտրոդներով TOCT9467-75, էլեկտրոդների մակնիշը՝ YOH - 13/55:

Ամրանները միմյանց հետ կապակցվում են երկկողմանի մակադրավներով, կարի երկարություն 5d+30%, լայնությունը 0,5d, հաստությունը 0,25 d:

Մասնաշենքի սեյսմիկ հաշվարկը իրականացվել է LIRA-SAPR 2022 համակարգչային ծրագրով: Ծրագրային փաթեթում հաշվի են առնված հայկական նորմերով ընդունված չափանիշները:

Հաշվարկներում կոնստրուկցիաներում կիրառվող նյութերի համար ընդունվել են հետևյալ չափանիշները՝ 1,2,3,4.

ա երկաթբետոնի առաձգականության մոդուլը – 30,6 ՄՊա,

բ շենքերի և կառուցվածքների թույլատրելի վնասվածության գործակիցը - 0.35,

с գրունտային պայմանների գործակցի արժեքները - 1.0,

д շենքերի և կառուցվածքների պատասխանատվության գործակիցը - 1.0,

е կառուցվածքի և հիմնատակի փոխազդեցության գործակիցը - 1.0:

Մասնաշենքը հաշվարկված է վեց բեռնավածքների տակ:

1. Մշտական բեռնվածք - մասնաշենքի կրող կոնստրուկցիաների սեփական քաշը:

2. Մշտական բեռնվածք - մասնաշենքի հատակների շերտերի և միջնապատերի բեռ,

որը

կազմում է 0.2տ/մ²:

3. Հավասարաչափ բաշխված նորմատիվ բեռնվածք - մասնաշենքի շահագործման ընթացքում, կախված նշանակումից, նորմերով հաստատված բեռ (կարճատև բեռ), որի հաշվարկային բեռնվածքը կազմում է 0.2տ/մ քառ.:

4. Սեյսմիկ բեռնվածք - մասնաշենքի վրա սեյսմիկ ազդեցությունը երկայնական ուղղությամբ:

5. Սեյսմիկ բեռնվածք - մասնաշենքի վրա սեյսմիկ ազդեցությունը լայնական ուղղությամբ:

6. Սեյսմիկ բեռնվածք - մասնաշենքի վրա սեյսմիկ ազդեցությունը ուղղաձիգ ուղղությամբ:

Տեխմնիկատնտեսական ցուցանիշներ՝

Մակերեսը	Մակերեսը	Տոկոսը
Հողամասի Մակերես	7901մ ²	100%
Կառուցապատման մակերես	1990 մ ²	25. 0%
Կանաչ տարածքների մակերես	4595 մ ²	58%
Անջրանցիկ տարածքների մակերես	710 մ ²	8. 9%
Ընդհանուր կառուցապատման մակերես	7390 մ ²	

Շահագործման փուլում գրասենյակների աշխատողների և բնակիչների առավելագույն թիվը, բնակարանների թիվը՝

ՄԱՍՆԱՇԵՆՔ Ա.	ՄԱՍՆԱՇԵՆՔ Բ.		
Երկրորդ հասարակական հարկ, ապարտամենտների քանակ՝	10	Երկրորդ հասարակական հարկ, ապարտամենտների քանակ՝	12
Երրորդ հարկի բնակարանների թիվ՝	11	Երրորդ հարկ հարկի բնակարանների թիվ	13
չորրորդ հարկի բնակարանների թիվ՝	11	չորրորդ հարկ հարկի բնակարանների թիվ՝	13

հինգերորդ՝ մանսարդային հարկի բնակարանների թիվ՝	5	հինգերորդ՝ մանսարդային հարկ հարկի բնակարանների թիվ՝	6
---	---	---	---

6. ԿՈՄՈՒՆԱԼ ԿԵՆՑԱՊԱՅԻՆ/ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Նախագծի տվյալ բաժինը կազմված է ճարտարապետա-շինարարականգծագրերի և գործող շինարարական նորմերի հիման վրա: Կյիմայական տվյալներն են ձմռանը՝ ջեռուցման համար հաշվարկային ջերմաստիճանը $t/H=-20^{\circ}\text{C}$, ջեռուցման ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանը -1°C , ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը 204 օր: Ամռանը արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը $t=+36^{\circ}\text{C}$: Ամռան ընթացքում ներքին ջերմաստիճանը ընդունվում է $+22^{\circ}\text{C}$ -ից $+25^{\circ}\text{C}$:

ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՄԱՍՆԱՇԵՆՔ «Ա» ԵՎ «Բ»

Համալիրի առաջին հարկում նախատեսված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Օդափոխության ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Ներածվող օդը տաքացվում է ջրային օդատաքացուցիչի միջոցով:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Բնակելի հարկերի համարների խոհանոցներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ հորանների միջով $\varnothing 160\text{մմ}$ օդատարերով, բարձրանալով տանիքից վեր 1,0 մ, իսկ $ս/հանգույցներից$ և լոգարաններից՝ կենցաղային օդամոխչով $\varnothing 125\text{մմ}$ օդատարերով, բարձրանալով տանիքից վեր 1,0 մ:

Նախատեսված է տեղական արտածում գազօջախներից:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Հասարակական հարկի օդափոխության ներածման համակարգի օդատարերը ջերմամեկուսացվում են:

Շենքի բնակելի մասից իրականացվում է ծխահեռացում $\Delta t < 1$ համակարգով, որի օդամուղը տեղադրվում է տանիքում: Ծխահեռացման օդատարները մեկուսացվում են իրակայուն մեկուսիչներով (ՄԲՕР): Օդի փոխատուցումն իրականացվում է հարկերի դեպի պատշգամբ գնացող դռներից:

Դիմիարման համակարգ նախատեսված է վերելակների հորաններում և աստիճանավանդակում՝ ՕԴԻ համակարգ:

Հակարդեհային օդամուղների գործարկումը կատարվում է իրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից:

ԼՈՂԱՎԱԶԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ

Լողավազանի մասնաշենքում նախատեսված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Օդափոխության ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են ձեղնահարկում:

Ներածվող օդը տաքացվում է ջրային օդատաքացուցիչի միջոցով:

Ներածումն ու արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

ՀՐԴԵՎԱՇԽՄԱՆ ՀԱԿԱՀՐԴԵՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՍՆԱՇԵՆՔ «Ա» ԵՎ «Բ»

Ինքնաշխատ հրդեհաշխման համակարգի նախագիծը կատարված է ըստ ճարտարապետական և տեխնոլոգիական առաջադրանքի, համաձայն գործող շինարարական նորմերի և կանոնների:

Համակարգը նախատեսված է երկրորդ հարկում (հյուրանոցային հատված): Ընդհանուր պաշտպանվող հատվածը կազմում է 800մ²՝ յուրաքանչյուր մասնաշենքում: Մնացած հարկերում նախատեսված է տեղադրել հրշեց ծորակներ պահարաններում:

Սպրինկերային և հրշեց ծորակներով համակարգերը նախատեսված են երկու կառավարման հանգույցով:

Սպրինկերային համակարգի ջրի պահանջի հաշվարկը կատարված է համաձայն ՀՀԸՆ Ա-8.04.02-2005:

Սպրինկերային և ծորակների համակարգերի ջրի պահանջը կազմում է $V=S^*q=120 \times 0.08=9.6\text{ l}/\text{վ}+2.5\text{ l}/\text{վ}=12.1\text{ l}/\text{l}=43.56\text{մ}^3/\text{ժամ}$

Համաձայն հիդրավլիկ հաշվարկի պահանջվող ճնշումը համակարգերում կազմում է 45մ 3 /ժամ:

Նախագծով նախատեսված է զուգ պոմպեր՝ GRUNDFOS SR45-2, Q=45մ³ /ժամ, H=45մ:

Սպրինկերային համակարգը մոնտաժվում է պողպատյա էլեկտրոեռակցված խողովակներից՝ Ø25, 32, 40, 50, 65, 80, 100մմ ներքին տրամագծով:

Համակարգի վրա տեղադրվում են CBY մակնիշի ունիվերսալ սպրինկերային ոռոգիչներ՝ dy=12մմ, t=57°C:

Խողովակների և ոռոգիչների մոնտաժումն իրականացնել հաշվի առնելով այլ ինժեներական կոմոնիկացիաների և սարքավորումների տեղակայման դիրքերը:

Մաքսիմալ հեռավորությունը ոռոգիչից մինչև առաստաղ չպետք է գերազանցի 400մմ-ը:

Համակարգը մոնտաժելուց հետո խողովակները փորձարկվում են P=0.7ՄՊա ճնշման տակ:

ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ՏԱՔ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Զրամատակարարման նախագիծն իրականացվել է պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, ճարտարապետաշինարարական գծագրերի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների՝ СНиП 2.04.01-85 համաձայն, որում հաշվի են առնել նաև շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանները:

Զրամատակարարման և զրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսացել նաև

- ճարտարապետա-շինարարական գծագրերը և գլխավոր հատակագիծը,

- տեղանքի տոպոգրաֆիական հանույթը,
 - տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները:
- Զրամատակարարումն իրականացվում է նախագծվող ներտարածքային ցանցից:
Ներքին տաք և սառը ջրամատակարարման ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե խողովակներից՝ Ø 63, 50, 40, 32, 25, 20 մմ:

Ցանցում ճնշումն ապահովելու համար նախագծով նախատեսվում է տեղադրել պոմպեր՝ մեմբրանային բակով:


Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահնու հեռացվում են նախագծվող ներտարածքային ցանցի մեջ:

Ներքին ցանցերը անցկացվում են պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակներից՝ Ø 110, 75, 50 մմ:

Ա. Ներքին և արտաքին ջրամատակարման ցանց

Ներքին ցանցը իրականացվում է համապատասխան ճարտարապետի կողմից մշակված հատակագծային լուծումների: Իսկ արտաքին ցանցը միանալու է ընդհանուր միացման կետին և այնտեղից բերվի դեպի կառուց, որտեղից էլ միանա ներքին ցանցին և հակահրդեհային ջրամբարին:

Բ. Ամբողջ շինությունը հագեցված կլինի ջրային հրդեհամարման ավտոմատ համակարգով(սպինկերային համակարգ): Պոմպակայանը նախատեսված է կաթսայատան հարակից շինությունում, նախատեսված է ջրի ռեզերվուար համապատասխան ծավալով՝ հակահրդեհային կարիքների համար: Պոմպերի քանակը ընդունված է N+1:



ԼՈՂԱՎԱԶԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ

Շինության նախագծվող ջրամատակարարման աղբյուր հանդիսանում է նախագծվող տարածքային ջրագիծը:

Կենցաղային-խմելու ջրագծի ցանցը նախագծված է ծուղակային, մագիստրալ-բաժանարար խողովակներն անցկացվում են հարկի հատակի նախապատրաստական շերտի մեջ:

Տաք ջրամատակարարման աղբյուր է հանդիսանում կաթսայատունը:

Տաք ջրամատակարարման ցանցը նախագծված է շրջանառու խողովակներով:

Սուղու և շրջանառու տաք ջրամատակարարման մագիստրալ խողովակները անցկացվում են կենցաղային-խմելու ջրագծին զուգահեռ:

Ներքին ցանցերը մոնտաժվում են պոլիարոպիլենային խողովակներով $\varnothing 50$, 32 , 25 , 20 մ:

ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ


15 μ3/օր տարողությաշբ մաքրման կայանը իրենից ներկայացնում է $5.15.0 \times 2.15$ մ ներքին չափերով և 3.20 մ խորությամբ ուղղանկյունաձև հատակագծով ստորգետնյա գործարանում պատրաստված պոլիարոպիլեն շիթերից կոմպլեկտ կառույց:

Մաքրման կայանի հատակի բետոնացումը նախատեսվում է դասի բետոնով: Հիմքը՝ 150 մմ հաս է իրականացնել $B25 W6 F150$ աստությամբ միաձոյլ Ե/Բ սալ 5.35×2.35 մ: Մաքրման կայանի ծածկը թեթև ավագային պաշտպանիչ շերտ- 150 մմ:

Օդամղիչ և տեխնիկական սարքավորումները տեղադրվում են առանձին սենյակում ու

Նախատեսված է մաքրման կայանի կառուցվածքի մեջ: Առաջին փուլում կատարվում է մաքրման առաջին՝ համասեռման փուլը, որտեղ կատարվում է սկզբնական աերացիոն և մարսում այն օրգանիք նյութերի, որ ավելի երկար ժամկետի կարիք ունեն: Հաջորդը՝ աերացիոն փուլն է, որտեղ կատարվում է - բիոլոգիական մաքրում մ թԿՊ և թՔՊ-ի նվազեցում մինչև 95 %, օգտագործելով միկրոպղպջակներ և բիոֆիլտրեր, վերջինները ունեն հիդրավլիկ և օրգանական հարվածների նկատմամբ մեծ առավելություն՝ դիմադրություն: Այս փուլում կատարվում է նաև չնչին քանակությամբ տիղմի ավելացում: Հաջորդը՝ տիղմի նստեցման փուլն է, որտեղ տիղմը նստելով, ջուրը առանձնանում է և անցնում հաջորդ փուլ, իսկ տիղմը վերադառնում է առաջին փուլ: Ավելցուկային տիղմը տեղափոխվում է հատուկ տիղմի կուտակման աերացիոն տարաներ, տիղմի մարսվելու և հետագայում, անհրաժեշտության դեպքում, օգտագործվելու կայանի տարբեր փուլերում, կամ հեռացվի կայանից:

Պարզեցված ջուրը ինքնահոս, առանց հոսանքի ծախսի, անցնում է ավագի ֆիլտրեր: Օրը



Մեկ անգամ, գիշերվա ժամերին, երբ կեղտաջրի հոսքը մաքրման կայան նվազում է, ավտոմատ նախատեսված սարքերի, պոմաերի միջոցով ջրի հետադարձ հոսք է մղվում և ավագի միջի կախված մասնիկները վերադարձվում են առաջին փուլ: ԵՎ վերջապես աղտահանման, վարաքաղերձման փուլ, որը կատարվում է քլոր դոզատորների միջոցով ավտոմատ եղանակով, վերջինս վերահսկում է օպերատորը: Ջուրը վերջնական արդյունքում մաքրվում է այն աստիճանի, որ կարելի է կուտակել ջրամբարների մեջ, օգտագործելով այն ոռոգման նպատակով: Ոռոգման ցանցը կիրականացվի պոլիէթիլենային խողովակներով՝ կից ցողացիրներով և փականներով, կտեղադրվի միջին հզրության ջրապոմպ, որը լինվին կրավարարի կանաչապատ տարածքի լիարժեք ոռոգման պահանջները: Ոռոգման սեղոնի որոշ ժամանակահատվածների համար լրացուցիչ ոռոգման ջրապահնաջի անհրաժեշտություն կարող է առաջանալ, որը կրացվի «Տավուշ» ԶՕԸ-ի կողմից իսկ դրա անհնարինության դեպքում տարածքում տեղադրվող ջրակուտակման ոչ մեծ ծավալի ռեզերվուարներից:

Կոյուղու համակարգ

Մասնաշենք Ա. Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծվող ներտարածքային ցանցի մեջ:

Ներքին ցանցերը անցկացվում են պոլիվինիլիուրիդային կոյուղու խողովակներից Փ110;75;50մմ:

Մասնաշենք Բ. Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծվող ներտարածքային ցանցի մեջ:

Ներքին ցանցերը անցկացվում են պոլիվինիլորիդային կոյուղու խողովակներից Փ110;75;50մմ:

Լողավազան. Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծվող ներտարածքային ցանցի մեջ:

Ներքին ցանցերը անցկացվում են պոլիվինիլորիդային կոյուղու խողովակներից Փ50;75;110մմ:

7. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԻԵՍԱՆ

7.1 Շինարարության ժամանակացույց

Շինարարության նորմատիվային տևողությունը որոշվում է հիմական աշխատանքների ծավալների, աշխատատարության հաշվարկման և տեխնոլոգիական հաջորդականության հաշվառման հիման վրա: Օրյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է 48 ամիս կամ 4 օրացուցային տարի, որից 6 ամիսը նախատեսված է նախապատրաստական աշխատանքների համար:

Միաձոյլ երկաթբետոնե աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 1,5 հերթափոխ:

Գումարային աշխատատարությունը կազմում է 160. 000,0մարդ-ժամ:

Առևտի սրահի կառուցման ընդհանուր շինարարության ժամանակացույցը կլինիչ 4տարի , որի փուլայնությունը և ժամկետները ներկայացված են ստորև սխեմայում.

ԱՇԽԱՏԱՏԻՎ ԱՎԱՍՏՈՒԾ	ԱՇԽԱՏԱՏԵԽՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՄԽՍԵՐ)			
	1 ՏՄԻ	2 ՏՄԻ	3 ՏՄԻ	4 ՏՄԻ
1 ԲԱՍԱՏՐՈՎԱԿԻՆԱԼ ԲԱՆԵԼ ՊԱՍՏԻ ԱՎԱՍՏՈՒԾ ՄԱՍԱՅԵՑ ՎՐԱ/				
2 ԲԱՍԱՏՐՈՎԱԿԻՆԱԼ ԲԱՆԵԼ ՊԱՍՏԻ ԱՎԱՍՏՈՒԾ ՄԱՍԱՅԵՑ ՎՐԱ/				
3 ԼՐՈՎԱՅՐԻ ԱՎԱՍՏՈՒԾ				

7.3 ԻՆԺԵՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՔԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԳՄ

Աշխատանքների բնույթից ելնելով քանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ և մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները տվյալ շինարարությունում անհրաժեշտ է ավարտուն շինարարական արտադրանքի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական-որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

Կառուցվող հասարակական նշանակության շենքի շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1. 5 հերթափոխով մասնագիտացված բրիգադներով:

Աշխատուժի անհրաժեշտ քանակը շինարարության համար որոշվում է համապատասխան աշխատանքների ծավալների և շինարարության տևողությանը:

Շինարարության մեջ զբաղված աշխատողների քանակը կազմված է՝

-հիմնական արտադրության վրա աշխատող քանվորներից՝ R հ,

-ոչ հիմնական արտադրության վրա աշխատող բանվորներից՝ R o.

-ինժեներատեխնիկական անձնակազմից՝ Rիտա

-կրտսեր սպասարկող և պահակային անձնակազմից՝ Rկսպ:

Հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների քանակը ընդունվում է մեկ հերթափոխում բանվորների առավելագույն քանակի չափով՝ Rբանվ. = (1.2-1.3)Rmax :

Ոչ հիմնական արտադրության վրա աշխատողների քանակը (0.2-0.5)Rmax:

Ինժեներատեխնիկական անձնակազմը՝ հիմնական և ոչ հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների 11%, իսկ սպասարկող կրտսեր անձնակազմը՝ 3.2%, բացի այս արձակուրդում և հիվանդության պատճառով բացակայողների քանակը կազմում է ողջ աշխատողների գումարի 5-6 %-ը:

Բանվորների առավելագույն քանակը կազմել է 40 մարդ, միջինը 23 մարդ: Բանվորների ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը կազմում է 1. 9 :

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանհիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն << առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքներ և տարածքի ջրանի ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից: Կոյուղին միացված է համայնքային կոյուղատարին:

7.4 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի պաշտպանություն

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը և գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս հաշվի են առնվելու քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգները:

Շինարարության ընթացքում ձեռնարկվելու են բնապահպանական կառավարման պլանով նախատեսված մեղմացնող միջոցառումները:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանհիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները: Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի,

արտադրական սանհիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները: Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանհիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Հետևողական մշտադիտարկումներ են իրականացնվելու շինարարական գործունեության բոլոր փուլերում՝ արձանագրելու շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամապատասխանությունները շինարարության ոլորտի համար սահմանված պահանջներին, նորմերին և չափորոշիչներին: Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատող կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանհիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Փոշենստեցման նպատակով տարածքում իրականացվելու է պարբերական ջրցան:

Թույլ չտալու համար նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. իրապարակ պետք է մտնեն և դուրս գան սարքին և մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը խոնավացվելու է և ծածկվելու պոլիէթիլենային թաղանթներով՝ թույլ չտալու փոշու առաջացում և տարածում: Ընդհանուր ջրապահանջը, ներառյալ նաև ջրցանի համար պահանջվող ջրի ծախսի հաշվարկը ներկայացված է ստորև այլուսակում:

Երեկոյան ժամերին դադարեցվելու է աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Սակավաշարժ խմբերի համար նախատեսված են բնակչության մնացած խմբերին համահավասար կենսագործունեության պայմաններ, շենքերի շրջակայքում նախատեսված են թեքահարթակներ, ինչպես նաև ներսում նախատեսված են անհրաժեշտ հարմարությունները՝ անարգել տեղաշարժի համար: Բոլոր մասնաշենքերում նախատեսված են նորմատիվային չափերին համապատասխան և անհրաժեշտ գույքով կահավորված սանհանգույցներ:

7.5 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման

Կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում վտանգավոր նյութերի կիրառություն չի նախատեսվում: Շինարարական նյութերի պահեստավորումը կիրականացվի ըստ ՇԿՆ-ի:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև.

NN	Անվանում:	Մակերիչ	Քանակ
1	Ավտոմոբիլային կրունկ	Liebherr LTM 1030-2.1	1
2	Երսկավատոր՝	Hyundai R290	1
3	Բուլդոզեր	CAT D6R	1
4	Շարժական կրոմպետոր	Comp air C 76	1
5	Բևոռնասմիջ	Actros 4141	1
6	Թրթոփիչ մակերևսային ելեկտրական	ИВ-91А	2
7	Թրթոփիչ խորրային ելեկտրական	ИВ-102А	4
8	Փոխարկված թրթոփիչների համար	ИВ-4	4
9	Դաշիչ ձեռքի ելեկտրական	ИЭ-4709А	2
10	Եռակցման սրանափորմատոր	ТД-500	3
11	Տոփանիչներ պետու և ձեռքի		2
12	Փոքր մեքենայացման միջոցներ	կրոմպետոր	2
13	Ավտոմոբիլաբախ	288AU61 Mercedes Benz AXOR 2012; IVECO TRAKKER AD410T44 2007;SCANIA P380 CB 2012;	բատ հաշվարկի
14	Ավտոբուսունախտանիշ	Kamaz 58149 z.	բատ հաշվարկի

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋԵՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով ՀՀ-ում գործող շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. իրապարակը կազմակերպելիս նախաձոռնողը ղեկավարվելու է քաղաքաշինության, տեխնիկական և իրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. իրապարակի հակարդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան

փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցվելու են աղմկոտ աշխատանքների կատարումը:

8. 1 Ազդեցությունների ընդհանուր նկարագիր

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- շինարարական տեխնիկակայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Շվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

8. 2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- ցեմենտի փոշու արտանետումներ, տարածքում նախատեսվող բետոնահանգույցից
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

8. 3 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատսխան բարձրության
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան.
- պարերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- իրականացնել շինութեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատսխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

8. 4 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր

և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար.

- Կանաչապատ տարածքների համար նախատեսված է ավտոմատացված ռոռզման համակարգ:

8. 5 Հողային ռեսուլսներ

Հողային աշխատանքների արդյունքում հանվող հողագրունտի ծավալը կկազմի 8500մ³, ետիցքի ծավալը՝ 1800մ³, բուսահողինը՝ 3200մ²: Հողային հանույթներից առաջացած բնահողը կուտակվելու է համայնքապետարանի կողմից առաջադրված տարածքում՝ հետագայում օգտագործելու նպատակով:

Հողային ռեսուլսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ Ն1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.

- Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը;
- Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
- Լայնակույտերի բարձրությունը և ծևը պետք է բացահայտված գործընթացների գարգացումը:
- Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողղողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքը կատարել հիդրոեղանակներով:
- Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:
- Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, եթե մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոփած ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնե մակերևույթի կամ պոլիէթիլենային ծածկի կամ փայտյա/մետաղական տակդիրների վրա
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, եթե մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քայլուղերի արտահոսք, ապա պետք է փոփած ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

8. 6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշխման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակագդել դրանց:

8. 7 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական իրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում իրդեհավտանգ թափուններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) իրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել իրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, իրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

8. 8 Աղմուկ և թրթոռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթոռումների մակարդակը պետք է համապատասխանի օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարուց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերապես ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթոռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: <<-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ <<Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և <<Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ <<ՀՀ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՏՄԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԾԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը չի գերազանցի սահմանված նորմերը և նույնիս միաժամանակ մի քանի շինտեխնիկայի աշխատելու դեպքում կգտնվի թույլատրելի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով կնախաձեռնվեն վերը նկարագրված լրացուցիչ միջոցառումները, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթոռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի <<օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուաչիչ դեր: Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլուխը: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն ել կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ ԼԱԷԿՎ, կազմում է 85 դԲ: Գլուխը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ ԼԱԷԿՎ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն <<ՀՀ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ 200կգ/մ²: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակա աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

Խաղ = 23 Ig m² – 10 դԲ, եթե $m \geq 200$ կգ/մ²

Խաղ = 13 Ig m² – 13 դԲ, եթե $m \leq 200$ կգ/մ²

Որտեղ $m = Km - Mm$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ²,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը

200կգ/մ² K=1,3

M = 1,3 x 200=260

Հաղ = 13lg mէ -13 = 18,2 դԲ

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

ԼԱտար = ԼԱԷկվ - Հաղ = 85- 18,2 = 66,8 դԲ

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հաղիսանում են որպես պաշպանիչ էլերան: Զայնամեկուսացումը RԱլտը ըստ աղուայակ 2՝ կազմում է միջինը 50 դԲ:

ԼԱտար = 66,8 - 50 = 16,8 դԲ

Գլուխի համար՝

ԼԱտար = ԼԱԷկվ - Հաղ = 80- 18,2 -50 = 11,8 դԲ

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլուխի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթում

Թրթուման նորմաները բնակելի շենքերում, ըստ << առողջապանության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթուման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 օկտավային շերտեր, Հց

	Թրթում արագացում		Թրթում արագություն	
	մ/վրկ2 .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10,0	80	0,79	84
4	11,0	81	0,45	79
8	14,0	83	0,28	75
16	28,0	89	0,28	75
31,5	56,0	95	0,28	75
63	110,0	101	0,28	75
	10	80	0,28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները				
Ոչ մշտական թրթուման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:				
Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ոնթերցարանների համար մտցվում է ուղղում - 3դԲ:				

Շինարարության ընթացքում թրթուման աղյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթուման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթոռումների մակարդակը շինարարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. 9 Թափոնների կառավարում

Կառուցապատման աշխատանքների ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու լրնթացակարգերը:
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Կառուցապատման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինությունների կառուցման ընթացքում, շինարարական և կենցաղային աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Թափոնների ծավալային հաշվարկված ցուցանիշները ներկայացված են ստորև.

Շինարարական թափոնների տարեկան ծավալը՝ $12 \times 24 \times 1.5 = 432$ խմ

Կենցաղային աղբի տարեկան ծավալը՝ $12 \times 24 \times 0.5 = 144$ խմ

Շին.թափոնները կիավաքվեն համաձայն ՇԳՀ-ի, համաձայն որի, թափոնների համար նախատեսված 2 աղբաման, չափերը $1.5 \times 2.5 \times 2.5$: Դրանք կեռացվեն համապատասխան թափոնավայր՝ համաձայն ՀՀ-ում գործող նորմերի և ընթացակարգերի: Կենցաղային աղբի տեղափոխման համար պայմանագիր կկնքվի Դիլիջանի համայնքապետարանի կոմունալ սպասարկում իրականացնող կազմակերպության հետ:

Վերը նշված թափոնները՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

	Անվանումը	Վտանգավոր ության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկ»	Քանակը
--	-----------	-----------------------	---	--------

1.	Շինարարական աղբ	IV	9120060101004	432 մ3
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	144 մ3
3.	Պղնձի, բրոնզի և արույրի թափոններ		31202600 01 01 3	Ոչ էական քանակներ ով , մինչև 7կգ
4.	Վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 95 5	

Շինաղբի, չաղտոտված հողային զանգվածի տեղափոխման վայրը, ինչպես նաև վերը նշված թափոնների տեղափոխման վայրը կճշտվի Դիլիջանի քաղաքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում: Իսկ օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալարը տարածքից կիեռացվի սպասարկող կազմակերպության կողմից:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Կառուցապատման աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղած հետևյալ մշտադիտարկումները:

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինարարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿԴ)

Ծրագրի գործողությունն եր	Ծրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	
Ն Ա Խ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ			
1. Հանրային լսումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	<p>1.1. Դպրոցի նոր շենքի կառուցման նախագծի և ԲԿԴ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է ս.թ. դեկտեմբերի 16-ին, ժամը՝ 12. 00 Տավուշի մարզի Դիլիջանի վարչական շենքում:</p> <p>1.2. Հանրային քննարկման հայտարարությունը օրենսդրությամբ սահմանված կարգով տպագրվել է «Առավոտ» օրաթերթի 14.11.2024 համարում:</p>	
2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿԴ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ բնակելի համայիրի շինարարության և շահագործման փուլերում:	<p>2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿԴ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև կապալառուի պայմանագրային փաստաթղթերում:</p>	
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ			
Առողջություն և աշխատանքային անվտանգություն			
3. Շինարարական իրապարակի բոլոր գործողությունները	ԲԿԴ-ի պահանջների չկատարումը և դպրոցի կառուցման բնապահպանական պահանջների մասին	<p>3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինարարակում:</p>	

	<p>տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշաճ կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:</p>	<p>3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ):</p> <p>3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոների խախտման ռեպրերը (օր. չփական էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն):</p> <p>3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում:</p> <p>3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովի սեղոնային արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն << օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):</p> <p>3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:</p> <p>3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:</p> <p>3.9. Խստորեն պետք է պահպանվեն << օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:</p>
--	--	---

Հանրության հետ կապ և հանրային իրազեկում

4.Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ	<p>Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:</p>	<p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին:</p> <p>4.2. Շին իրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լրացման վերաբերյալ:</p>
---	---	--

Շրջակա միջավայրի պահպանություն

5.Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ	<p>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործության առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը:</p> <p>2. Շին. աշխատանքների արդյունքում աղմուկի և թթուումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:</p>	<p>5.1. Օդի աղբուբեման և փոշու կառավարում</p> <p>5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրանումների իրականացում:</p> <p>5.1.2. Օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խոսափելու համար:</p> <p>5.1.4. Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>5.1.5. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու</p>
---	--	--

	<p>նպատակով:</p> <p>5.1.6. Անհրաժեշտ է ապահովել շին հրապարակ մուտք գործող և լրող մեքենաների անվադողերի լվացումը:</p> <p>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի <<օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ սահմանված ժամանկացույցի:</p> <p>5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝ սամանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում:</p> <p>5.2.3. Մեքենաների ապահովում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում:</p> <p>5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում:</p> <p>5. 3 Զրային ռեսուլուսների պահպանություն</p> <p>5. 3. 1 Զրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենսդրման համար,</p> <p>5. 3. 2 թափոնների պահեստավորումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվի դրանց շփումը անձրևաջրերի և ջրային ռեսուլուսների հետ</p>
--	--

6.Կենսաբազմագ անություն	<p>1. Բուսական աշխարհի վրա հնարավոր ազդեցություններ</p> <p>2. Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցություններ</p>	<p>6. 1 Նախատեսվող գործունեության տարածքում արժեքավոր և հատուկ պահպանության միջոցառումներ ենթադրող բույսերի տեսակները բացակայում են: Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում պարբերական մոնիթորինգ և հսկողություն կիրականացվի հնարվոր ռիսկերը բացառելու նպատակով:</p> <p>6.2 Նախատեսվող գործունեության տարածքում արժեքավոր և հատուկ պահպանության միջոցառումներ ենթադրող կենդանիների տեսակները բացակայում են: Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում պարբերական մոնիթորինգ և հսկողություն կիրականացվի հնարվոր ռիսկերը բացառելու նպատակով:</p>
----------------------------	---	---

Շինարարական հրապարակի կազմակերպում

7.Շինհրապարա կի կազմակերպու մ	Շինհրապարակի կազմակերպումից ազդեցություններ	<p>7.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:</p> <p>7.2. Շին. հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շին. նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>7.3. Անհրաժեշտ է նախատեսել ավագի, ցեմենտի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի պահեստավորումը փակ տարածքներում կամ դրանց ծածկումն անթափանց թաղանթներով:</p> <p>7.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական</p>
--	---	---

		<p>ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>7.5. Անհրաժեշտ է իրականացնել շենք ծածկումը շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:</p> <p>7.6. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, ինտիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախազգուշացնող նշաններ:</p> <p>7.7. Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակի տարածքից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված լվացման կետերում:</p>	
Երթևեկության կառավարում			
8. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	<p>Երթևեկության հնարավոր ազդեցություններն են.</p> <ul style="list-style-type: none"> • Երթևեկության խափանումներ • Երթևեկության կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ • Վիշտ, աղմուկի և թրթոռումների մակարդակի աճ • հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում • Շինարարական ծանր սարքավորումների փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին 	<p>8.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհն նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</p> <p>8.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախական վիճակը:</p> <p>8.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքը ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով:</p> <p>8.4. Անհրաժեշտ է խոսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>8.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p>	

	Վնաս	<p>8.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>8.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար:</p> <p>8.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և դրանք փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենաներով:</p>	
Արտակարգ իրավիճակների կառավարում			
9.Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակներ ի դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)	Վառելիքի, յուղի կամ այլ թռնավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	<p>9.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. իրապարակում;</p> <p>9.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>9.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան << օրենսդրական պահանջներին:</p> <p>9.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:</p> <p>9.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>9.6. Շին. աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշխման սկզբնական միջոցներ, հրշեց</p>	

	<p>հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պատառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>9.7. Մշտապես իրականացնել շինարարական իրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>9.8. Հրդեհաշխջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>9.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p> <p>9.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն համապատասխան գրանամատյանում:</p>
--	---

Թափոնների և նյութերի կառավարում

10. Ծինհրապ արակ և շինարարակա	Ծին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման	10.1. Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների
-------------------------------------	---	---

Ն աշխատանքներ	<p>համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:</p>	<p>բոլոր հիմնական տեսակների համար:</p> <ul style="list-style-type: none"> 10.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 3 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար; 10.3. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին. աղբի նախնական կուտակման վայր: 10.4. Շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր՝ հատուկ սահմանված երթուղով: 10.5. Շինարարակում հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: 10.6. Պետք է կատարվեն թափոնների հեռացման վերաբերյալ համապատասխան գրանցումներ/գրառումներ՝ որպես ապացուց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ և նախատեսվածի համաձայն: 10.7. Կենցաղային աղբի հավաքումը պետք է իրականացվի դրա համար նախատեսված տարրաներում և պարբերաբար հեռացվի համապատասխան աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: 10.8. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին. աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:
------------------	--	--

Աշխատողների վերապատրաստում

<p>11. Աշխատողների վերապատրաստում</p>	<p>իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:</p>	<p>11.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>11.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է իրազեկել աշխատանքի անվտանգության և տարբեր արտակարգ իրավիճակների դեպքում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ:</p>
---------------------------------------	---	--

Աշխատանքային տեղամասի վերականգնում, բարեկարգում, տարածքի կանաչապատում

<p>1 Վերականգնում, տարածքի բարեկարգում</p>	<p>1 Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը թափոնները և այլն:</p>	<p>13.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:</p> <p>13.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>13.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p> <p>13.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները;</p> <p>13.5. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ դրանք համաձայնեցնելով Վեդու համայնքապետարանի հետ:</p>
--	---	---

ՀԵՏՃԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԽԸ			
1	Շինարարական փոլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	14.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճառ իրականացումը:	

--	--	--	--

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԸ						
Վայր/ Գործողությ ուն/ Փուլ	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորին գի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատաս խանատո ւներ	Մոնիտորինգ ի հաճախական ություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԸ						
